


Մ Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՌԳԱՅԻՆ • ԲԱՆԱԹԻՐԱԿԱՆ • ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱԼԱՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875

ՅՈՒՅԱԿ ԳՐՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ



ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԵՒ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆՔ ՆՈՅՆ

Ազնէս, Հայերենէ փոխեց ՚ի Տաճկերէն Յ. Քիւրքնեանի. տպուող 1872.	4	
Աղօթագիրք Արքայան տեղաց, աշխարհիկ լեզուաւ.	2	
Անուրջը ՚ի Սիւն, ոգեաց Մ. Թաթուլ. 1869.	1	20
Առաքինութեան ճանաչման, կամ Մենտոր մանկանց, թարգմանեց Տ. Հ. Թ. Ս.	7	
Աւետարան աստեղի. Ս. Եկեղեցւոյ մէջ կարգացուելիք աւետարաններն են.	30	
Աւետարան փոքր, Տպեալ 1867.	6	
— Նոյնը կտակարանով. Տպեալ 1867.	12	
— Նոյնը ճաշու. Տպեալ. 1868.	30	
Բանախօսութիւն, աշակերտութեանց մէջ. Բ. Տպ. 1874.	1	
Բացատրութիւն Հրաժարման եւ զղջման եւ առաւօտեան երգոց շնորհալ. (*)	6	
Գաղիկ վերջին արքայ Հայոց Բաղդատունի, ողբերգութիւն. Տպ. 1672.	5	
Գործը Առաքելոց, Տպեալ 1867.	6	
Գործը Ոսկիղիկի Սամաէլ Ռաբրի հրէի. Տպեալ 1867.	3	
Գովտամբ. Տպեալ 1867.	3	
Ելլէ, պատմութիւն վարդանանց պատերազմին ընտիր դարձ նախնեաց.	7	
Երեւոյթ կրից, Տպեալ 1851.	7	
Երկու խաբ, եկեղեցւոյ պաշտօնեից ուղղուած. Տպեալ 1873.	3	
Եկիւմ խորի, աղօթագիրք, գործ նախնեաց, Դ. տպագ. 1870.	7	
Զանազանութիւն հինգ դարուց. Բ. տպ. 1862.	40	
Ընդհանրական թուղթը Նիւրնբերգի Շնորհալուց. Տպեալ. 1871.	18	
Թանգարան խրատու. Գ. տպ. 1870.	18	
Թաղիքի տեղակ տարեկան, Տպեալ 1839. (*)	3	
— Նոյնը շարաթիւն. Տպեալ 1838 (*)	2	20
— Նոյնը՝ Ս. Զատիկոյ տանարին մէջ կատարուած թափօրներու հաճար	4	
Թուարանութիւն համառու, Ս. Պ. Փաշաղեանցի. Դ. տպ. 1869.	3	
Ժամագիրք խոշորագիր. Տպեալ 1866.	20	
Ժամագիրք աստեղի. Տպեալ 1870.	50	
Խնդիր Ս. Տեղեաց եւ Նորա պաշտօնական քննութիւնը, Տպեալ 1871. (**)	6	
Խորհրդածութիւն Ս. պատարագի, գործ նախնեաց. Տպեալ 1842.	10	
Խորհրդատար Ս. պատարագի, Տպեալ 1873.	10	
Կարգադրութիւն առողջութեան, Տպեալ 1871.	5	
Կենսագրութիւն Բասթարայ, Տպեալ 1869.	2	
Կտակագիր հոգեւոյճ բանից. Գրեց Արքայ Խաննից, Տպեալ 1853.	6	
Կրթարան Աւետարանական բանից. Դաս Ա. Ամեն Պետրոս.	1	20
" " " Դաս Բ. Ստեփանի.	1	20
" " " Դաս Գ. Որդիք Աստուծոյ.	1	20
Համապատասխան երկրաւորական առաքելոց. հանդերձ յաւելուածով.	4	
Համառուութիւն Բրիտանական ուսման. Տպեալ 1873.	4	
Հայերի վկայ. Տպեալ 1852. (*)	6	

Ե Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մէկ աստիճան (*) եւն գրի հաշուագիտ լեւուց ինչոյդիւն.
Իմ երկուց (**) Բուրճիկի աստուծ լեւուց:



ՏԱՍՆԵՐՈՒՄԻ ՏԱՐԻ
ԹԻՒ 6.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԻՍ 30
1875.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ

Ճանաչելու, համար խորհուրդ պէտք է, շինելու, համար միութիւն ևս գործ

ԱՐԱՐԱՊԵՏՆ իւր հեղինակութիւնն իրեն գործելով հաստատելու և ապացուցանելու համար, խորհրդով յօրինեց երկնից կամարը, և անոր մէջ հաստատեց այն սքանչելարուեալ աստեղաց կարգաւորութիւնը, անոնց գեղեցկատեսիլ տեսարանն, անխտար և անխտար չարժուամբերն և շրջանները, լուսնոյ գեղատեսիլ դիրք և լուսաւորութիւն և նորա անվերայ շքեղանն, արեգակն ընթացքը, նորա լոյսն և ճաճանչաւոր ճառագայթն, և այս հաստատութեանց միջոցաւ մեր երկրագունդի վայելած բարեբները:

Սրա անտարակոյս զմեզ կը համար

Ժ

զեն և կը հաստատեն ամենակորով և անխտար արարչագետ հեղինակի մը գոյ լինելն:

Նաեւ երբ հասուն խորհրդով նր կատարութեան կ'առնուի հողագործի երեսի թռչնոյ յօշո սաւառնիլն, և ճախրիլը, ծովերու կարգաւորութիւնը և անոնց անդր քան գտահման չանցանելն, անոր ամենի փոփրագէղ արեւոյ յինքն խորտակիլն և խորասուզիլը, նոցա միջի ձկանց և այլ կենդանեաց աճիլն և բազմանալը, ծնանիլն և սնանիլը, նոցա զարմանաբանչ լուղիլը, տրա մեզ տարակուսութիւն չեն թողուր տիեզերաց հեղինակի հան

Ճարտքն գործ լինելուն եւ նորա նախախնամութեան վրայ, թէ յերկինս, և թէ յերկրի, թէ՛ ՚ի ծովու և թէ՛ ՚ի ցամաքի տարածելով կը խնամէ և կը պահպանէ եղածները :

Երբ քննութեան կ'առնուիք երկրի երեսի վրայ բուսած ծառերը, առնէ կերը, խոտերը, ծաղիկներն և անոնց զմայլելի անուշահոտ բուրումներն և նոցա մատակարարած պտուղներն եւ բարիքները մեր կենաց ապահովութեան համար :

Երբ կը տեսնեմք ամպերու անձրեւիլն, արեգական ջեռուցանելը և երկրի բուսուցանելն, այս զարմանալի քանի առնչական անհուն հեռաւոր և անմիջական մերձաւոր առաձգական յարաբերութիւնները, չեմք կրնար չը խոտովանիլ սոցա ամենակարող և առնականաւոր արարչապետի մը հեղինակութենէն բղիխիլ և նորա ակնարկութեամբ կառավարուիլ :

Այս ամէն ստեղծուածներու մէջ մարդն աւելի կ'ոտորեալ ստեղծուած է, և բանաւորութեամբ կը տարբերի միւսն ամէն կենդանիներէն և թռչուններէն, ու ծովու մէջ լողացողներէն, զի նոքա ինչ որ կը գործեն լսի բնազդամբ է, իսկ մարդս հոգեւոյ կարողութեամբ, այն է խորհրդով :

Մարդիկ երբ լսի զգացմամբ կը գործեն եւ կամ կամայ թերազրութեամբ առանց խորհրդոյ միջամտութեան, նոցա գործերը միշտ անուղիղ և սխալ կը լինի բնազդեցական գործերու պէս, իսկ երբ խորհրդեան կը յանձնեն իրենց առնելի գործերը եւ նորա վճռոյն կրտսանն, այն ժամանակն ուղիղ կը լինի մարդկանց գործերը և կամ շատ քիչ կը սխալին :

Մարդիկ ուղիղ գործելու համար պէտք է որ շատ խորհին և խղճի առնարատութիւնը պահեն, որպէս զի

կիրքերէն չը նսեմանայ : Ստեղծարար տուած գրոյց մէջ տուած տեղեկութեանց նայելով հաւաճանութե մը միջոցաւ, մարդս իւր առաջին գերազանցութիւնը կ'որսնցուցած, նախանձու, ատելութեան, բարկութեան, փառասիրութեան, սխալալութեան, անյագ ցանկութեան կիրքերն այն տասիճան զօրացած և նորա այն վնեմ բանավարութեան վրայ տիրապետած են, որ մարդը ալ չէ կրցած իւր բանականութեան հաւասարակշիւութիւնը պահել և կրից ձեռք խաղալի եղած վտեր են զինք ըստ կամս իւրեանց, որով մարդկային սերնդեան խորհելու կարողութիւնը խանգարուած և անանցաբար իրարու ներգործած, միջեւ առնանական վիճակին իջած է երբեմն մարդկութեան տոհմն :

Երբ պատմութիւնը մեր աչքի առաջը կ'առնուիք և սկիզբէն մինչեւ մեր օրերը մարդկութեան վիճակի վերայ ակնարկ մը կը ձգեմք, որքան որ կիրքերէն յափշտակուած եւ նուաստ վիճակի զիջած և իջած անթիւ և անհամար մարդիկ կը տեսնեմք, սակայն եղեր են այնպիսի մարդիկ ալ, որք մարդկութեան նշանաբանը ճանցած, եւ նորա վեհութիւնը պահած կ'առավարած և կ'առավարուած են ուղիղ բանի առաջնորդութեամբ առանց կրից անասլու : Վասն զի որքան որ կիրքերը զօրացած և տիրապետած էին մարդկանց վրայ սակայն բանականութեան անաղօտ և ճշմարիտ լոյսը յաղթելու չափ ոյժ չունէին, ուստի տիրեցին տկար և ինքզինքնին կրից հաճոյից խափուսիկ հեշտութեանց և երեւակայական բարեաց յանձնուող մարդերուն միայն, որք կրից հոսանաց առջեւ ինկած կ'երթային :

Չը կրցան տիրել այն մարդկանց, որք միշտ գիմարեցին այն առ երեւ

ւայթ բարեաց, և անխանջ աշխատեցան բանաւորութեան ճշմարիտ լոյսն յինքեանս վառ և պայծառ պահել, թէեւ շատերը վնասուեցան հարուածուեցան հալածեցան և ՚ի մահ իսկ դատապարտուեցան, բայց չըխտորեցան յուղղութենէն, և անոնց աշխատութեան արգասիքն է որ այսօր կը վայելեմք ՚ի տեղիս տեղիս:

Բանականութեան խանգարումն և կրկն տիրապետելու չար որոմներն, աշխարհիս մէջ հրէշ զաւակներ ծնան, որք սկսեցին ուղղութիւնը թիւրել, ազատութիւնը գերել, հաւասարութիւնը ջնջել:

Եւ այս կարգի մարդիկներէն զբաւորն ուղեց անդորին վրայ իշխել, տիրապետել, կեղեքել կողոպտել, անիրաւել, սպառնել և հնազանդեցնել անհնազանդները և իրեն կամաց չհպատակողները ՚ի մահ իսկ մատնել, կարծես թէ զօրաւորն կամ այն մարդկանց արարիչն լինէր և կամ նոցա վրայ իշխելու համար յԱստուծոյ իշխանութիւն մը առած լինէր:

Հարցուր դու այդ զօրաւորին թէ դու ո՞վ ես, կը պատասխանէ որ քեզի պէս մարդ և քու եղբայրդ եմ. ուրեմն ինչո՞ւ իշխել կ'ուզես իմ անձիս և ստացուածոյս վրայ, դու քեզ համար աշխատէ ապրի, և ես ինձ համար: Նոյն կը պատասխանէ, որովհետեւ ես քեզմէ զօրաւոր եմ, պէտք է որ ես քու վրայ իշխանութիւն ունենամ և դու պիտի աշխատիս միշտ, ու ես պիտի ուտեմ և հանգիստ կեանք վարեմ: (Թէ ինչո՞ւ բնութեան հեղինակը ամենքը միազօր և հաւասար չըրաւ որոյն զօրաւորը այն պատասխանը չի տար, հեղինակի այս անհաւասարութեան գործն իրեն վիրապահեալ գաղանիքներէն մինն համարելէն ՚ի զատ ուրիշ բան չեմք կրնար ըսել:)

Իրաց այս վիճակի մէջ երբ տկարն տեսաւ որ հզօրին յողթելու չափ ուժ չունի, ահաբեկ եղած պահ մը լռեց, ու հնազանդեցաւ ակամայ կամօք, և իրեն վրայ ՚ի գործ դրուեցաւ փոխանակ սիրոյ, ատելութիւնը, փոխանակ իրաւանց՝ անիրաւութիւնը, փոխանակ օգնութեան՝ անօգնականութիւնը, փոխանակ գթութեան՝ անգթութիւնը, փոխանակ մարդասիրութեան՝ ատելութիւնը, փոխանակ եղբայրսիրութեան՝ եղբայրատեցութիւնը, փոխանակ արդարութեան՝ անարդարութիւնը, ու զրկողութիւնը, փոխանակ ճշմարտութեան՝ ստութիւնը, փոխանակ գիտութեան՝ անգիտութիւնը, փոխանակ միութեան՝ անմիութիւնը, այս ամէնը մարդկութեան գլուխը կ'ուտելով բաժանեցին, հալածեցին, հարուածեցին, կեղեքեցին:

Խեղճ զրկեալն առ ո՞վ բողբէր, առ ճշմարտութիւնն, նա արդէն քողարկուած և մշուշներու մէջ պատատուած էր: Առ արդարութիւնը, նա հալածուած էր: Իւր եղծօրը ձեռք կտաւ եւ քթութիւն հայցէր, խորամանկութիւնը արդէն զայն հեռացուցած էր իւր եղծօր ձայն չը լսելու համար, և ինչպէս որ տա այս բռնապետի ձեռք կը հարուածուէր, այսպէս ալ իւր եղծայր, ուրիշ բռնապետի մազիկներու մէջ ինկած կը փետուէր:

Պատմէ դու այն բռնաւորին թէ բնութեան հեղինակը երբ առաջին մարդն մեր ամենուս նախահայրն Ադամն ստեղծեց աճելու և բազմանալու հրաման տուաւ, այս երկրագունդը մեզի բնակութեան տեղի և ամենուս հաւասարապէս աշխատելու վարելու, ցանելու, սնկելու, դարմանելու հնձելու, շտեմարանելու ազատ և հանգիստ վայելելու համար սահմանեց, և ամենքս հաւասարապէս բաժին ու

նիմք այս հողագնդիս մէջ, վասն զի
թէ ամենքս մի և նոյն հեղինակի գոր-
ծերն եմք և թէ իբրեւ հաւատար եղ-
բայր ժառանգ և ժառանգակից եմք
սորա, իբրեւ մեր նախահօր Ադամայ
ժառանգութիւնը: Արդ, դու ի՞նչ
իրաւամբ զիս կը զրկես իմ բաժինս կը
յափշտակես, ո՞չ սպաքէն երբ դու
այսօր իմ բաժին երկիրս ձեռքէս կը
խլես, վաղը իմ կենացս դաւաճան կը
դառնաս, և թէ չունենամ երկիր մշա-
կութեան տեղի, ո՞ւր աշխատիմ և ին-
չով ապրիմ: Նա քեզ այսքան շնորհք
կրնէ բաշխով թէ որովհետեւ ես քեզմէ
զօրաւոր եմ, ամեն բանը իմն է, միայն
քու հոգեպարհիկդ քեզ կը արուի ս-
րով պիտի ապրիս եւ աշխատիս ինձ
համար, եթէ չը հնազանդիս պիտի
մեռնիս: Այլ պաղատի զրկեալն, ուրե-
մէն արծակէ զիս որ երթամ. թող
քեզ լինի ամեն ունեցածս, սակայն
պատառասն կ'ընդունէ, ազատ չես
երթալու կապեալ ես յիս և դու քու
անձիդ ազատ տէրը չես, ես եմ նորա
տէրը, և դու իմ իշխանութեան հըռ
հպատակը, և կամակատար ծառայ,
ուրեմն հնազանդէ ու աշխատի:

Առ այս ահաբեկ եղած ժողովուրդն
թող տուաւ որ զինք գերութեան չըղ
թաներով պարսաւանդեցին և բռնութե-
ն տիրապետութեան անտանելի տ-
նուրը նորա վրի վերայ դնելով վարե-
ցին իրենց կամաց և հաճոյից համե-
մատ, ժողովուրդը զայս տեսաւ և ա-
ւալ կարգաց ու նղովեց իւր ծնած
օրը և ինք մնաց բռնաւորի վայրագ
մագիլներու մէջ շնչոտսպառ և կը հե-
ւար անոք և անօգնական:

Ժողովուրդին այս վիճակը թէ և բըռ-
նաւորին շահն էր և կամաց հաճելի,
զի իւր փառք բարձրացած կը տեսնէր,
և կեանք անաշխատ և հանգիստ, եւ
ապահով, սակայն միւս կողմէն կրնար

դժալ թէ՛ արդարութիւն կը տկարանայ
բայց չի մեռնիր, ազատութիւնն կը
բռնաբարուի, բայց իւր էութիւնը և
գոյութիւնը չի ոչնչանար: Հաւատա-
բութիւնը կը խանգարուի բայց չի ա-
պականուիր, զի ասոնք այնպիսի սկրդ-
բունքներ են, որք ուղիւստիս մէջ ան-
վտանգ կը մնան, և ապականեալ աչ-
խարհի վրաստակ փոշիներու մէջէն կը
նան կրկին վերածնիլ: Զի մարդկու-
թեան միութեան բաժանու մնալ իրեն
սահմանը ունի, և երբ սոցա սահմանը
լեցուի և նոքա միութեան ձեռնարկեն,
մեր զօրութիւնը պիտի տկարանայ այն
ժամանակը մեր ամեն հնաբքները վեր-
ի վայր կը տապալին: Աւստի սոցա վի-
ճակը փոխել պէտք է, բսին և սխեցին
գիտութիւն և մտածութիւն քերեղ
և անհետացունել ժողովրդեան սրահն
և նորա տեղը տգիտութիւնը և անրգ-
գայութիւնը տուին, եւ անոնց խոր-
հուրդները ստորերկրեայ վիշտակաց
տակը թաղեցին:

Ժողովուրդ մը ուրիշ ժողովրդին
հետ չըմիանալու համար, նոցա իրա-
բութեան ունեցած առնչութիւնը կը տ-
րեցին, և զանոնք իրարմէ բաժանեցին,
ու նոցա մէջ տեղը անջգպետեցին, այն
աստիճան խանգարեցին նոցա միտքն որ
այլ եւս անկտրելի քղաւ իրենց ազա-
տութեան միջոցը խորհիլ, նախապա-
շարեցին զանոնք կանխակալ կարծիքնե-
րով, ահաւոր տանջանքներով բանտ և
կախաղանք հնարեցին, իշխանութեան
ճիւղերը ընդարձակեցին և տարածե-
ցին զանազան ճիւղերու բաժանանե-
լով՝ աշխարհ ահաբեկ ըրին:

Եւ իւրաքանչիւր բռնապետ եւ
տիրապետ իրենց կիբքերն եւ մոլու-
թիւններն առած աշխարհ մտան, և
աշխարհ ապականեցին:

Ամբարտաւան և սոսկամիթխար
Բէլ մը աշխարհի հիւանդութենէն նոր

տորի ելած փափուկ միջոցին մարդկու-
թեան տուժմը իւր միապետ իշխանու-
թեան տակը կը նուաճէ, Մէնէսարայ
երկն սերձ անբարտալին կանգնելու և
բարձրացուցանելու համար, ժողովուր-
դին անորդ գործերու և աղիւսար-
կութեան ու քարահաւանութեան կը
դատաւարատէ, և արարածոյն, արար-
չի դէմ ապստամբիլ մարանչիլ և յաղ-
թելու յնորական երազներով կը զա-
ւանդէ:

Աղէքսանդր Մակեդոնացին փառա-
սիրութեան կիրքէն յաղթեալ եւ
տիեզերակալութեան բաղձանքներէն
յափշտակեալ զրեթէ երկրագունտի
մեծ մասը կը յեղափոխէ և իրեն ան-
զուսպ բաղձանաց և անխորհուրդ կա-
մաց չը հնազանդող ժողովուրդէ՝ և ազ-
գեր ՚ի սուր սուսերի կը մաշէ եւ
աշխարհ սարսեցունելով կ'ըսէ. «Մնչպէս
որ մի է արեգակն հողագնդիս, այսպէս
ալ մի պիտի լինի տիեզերակալ իշխա-
նանութիւնն Աղէքսանդրի:

Որպէս թէ Արարիչն զայն տիեզերա-
կալ ստեղծած լինէր, եւ կամ ժողո-
վուրդներն և ազգերը անոր կամաց
հպատակ և ստրուկ գերիները ստեղ-
ծուած լինէին:

Ներոն և Գելոկլէտիանոս իրենց
անսարաշտութեան չը հետեւող և ա-
զատ խաչի դրօշակի տակը սրտասպա-
րիլ ուզող ժողովուրդները անխնայ կը
կոտորեն:

Տիրոս և Վեսպասիանոս աստուածա-
ծանօթ ժողովուրդը չարաչար և դառն
տանջանքներով կոտամահ կ'ընեն,
քաղաքները կը կործանեն շէնքերը
կայրեն, Աստուծոյ նուիրական տեղերը
կը պղծեն և իրենց կամաց չը հնազան-
դող ժողովուրդը ոչնչացունել կը մը-
տաբերեն:

Լենկթէմուր իրեն անձնատուր
չեղող եւ չը հնազանդող ժողովուրդ-

ները և ազգերը, և մինչեւ իսկ գիւն-
ցիկ մանկուկնք անխնայ սրայ ճարակ կը
տայ և նոցա արեամբ լիճ կը կազմէ և
կը լողայ իւր անզուսպ կից բերկրու-
թիւն տալու համար:

Ինչո՞ւ շատ հեռանամք դեռ երեկ
անթիւ զօրականներ և երկու ընդար-
ձակ աշխարհներ և անթիւ ընտանիք
զոհ ցնացին երկու փառասէր կրից:

Յունաստան մէկ աղջկան համար
անթիւ զոհեր կուտայ եւ զոհեր
կ'առնու և համբաւատենչն Տրոլագայ
հողակոյտ մը կը դարձունէ և նորա ա-
նունը հողաց տակը կը թաղէ և կ'ան-
հետացունէ:

Շամիրամ Արայի գեղեցկութեան
յարեալ, Հայաստան տակն ու վրայ
կ'ընէ եւ միջնաւոր մարդիկ կը կո-
տորէ:

Անխորհուրդ Պապ մը, ոչինչ տեղ
արեւելք և արեւմուտ իրարու դէմ
կը գրգռէ և արեւելեան պատերազմ
կը յարուցանէ անհամար արիւններ
կը թափուի, քնտար արեւելեան ծալ-
րէն մինչեւ արեւմտեան ծայրը կը
հասնի:

Բաբելոնը ընչաքաղցութեամբ մե-
լեգնեալ Պաղեստինու քաղաքները
հրձիգ կ'ընէ և ժողովուրդն շղթայա-
կապ յեափոստ մինչեւ Բաբելոն կը
մղէ և գերութեան ծանր լծոյն տակ
զոյն կը դատաւարատէ, եւ անարդ-
գործերով կը դառնցունէ, ճշմարիտ
Աստուծոյ անունը նոցա ուրանալ տա-
լու սպառնալեօք:

Եգիպտոս իւր միակ փրկիչ և բա-
րերարի սերունդ ժողովուրդը գերու-
թեան կը գառապարտէ սոխ և սխտո-
րով միայն բաւականացնելով զանոնք
տիւ և գիշեր անհանգիստ աղիւսար-
կութեան անարդ գործերուն կը դա-
տաւարատէ, և նորածին մանկանց ինչ-
դէլ կը հրամայէ: Յազկերտ, Շահա-

պող, ձինկիղխան Պարսիկները մոգա-
կան կրակը ձեռք առած Հայաստան
կը դիմէն նուիրական տաճարները կայ-
րէն, կռակին երկրպագութեան հրաւէր
կը կարգան, չը լսողը հրով կը դատեն,
քաղաքները եւ աւանները կը կործա-
նեն, ժողովուրդը 'ի սուր սուսերի կը
մաշէն :

Նաբուգոդոնոսոր, Սէնէարայ դաշ-
տի մէջ անդրի կը կանգնեցունէ, եւ
ժողովուրդը բռնի երկրպագութեան
կը դատապարտէ, ապստամբները գե-
հենին կը մատնէ եւ հրոյն կը ծախէ :

Անդրալեոնական կըզերմը ազատ
գաղութարայ դէմ հալածումը կը հա-
նէ, անթիւ անհամար մարդիկ կա-
ռափարաններուն կը մատնէ աշխար-
հավարներու ձեռքը :

Սնաթաշտութիւնը Եփեսոսի ժո-
ղովուրդը երկար ժամանակ Արտեմիայ
կոյն միհէան շինելու կը դատապար-
տէ եւ անթիւ հարստութիւն կը փշա-
ցունէ, մեծագործութիւն եւ հրաշա-
կերտութիւն անունը ստանալու հա-
մար, բայց ժամանակէ մը վերջ փոքրիկ
լուցկի մը անոր ամբարտաւանութիւ-
նը յանդուգա կը խոնարհեցնէ, զայն
աճիւն կը դատէ եւ յիշատակն կ'ան-
հետացունէ :

Շամիրամայ Բաբելոնի պաշտպանու-
թեան ցնորական տենչը, գերամբարձ
պարիսպները կանգնելով ժողովրդեան
կեանք եւ հարստութիւնը 'ի կորուստ
կը մատնէ :

Տգէտ փառամոլութիւնն Ապոլլոնի
անուան պղնձեայ վիթխարի արձանը
կը կանգնէ Ռոտոսի նաւահանգստին
վրայ ժողովրդին հարստութիւնը սպա-
ռելով, եւ քիչ ժանակէն մէկ ցնցմամբ
յերկիր կը տապալի անկանգնելի եւ ո-
րուն հետքն անգամ այսօր մեզ աննըչ
մարելի է :

Կաամը Եգիպտոս ազգերը եւ ժո-

ղովուրդները կեղեքելով բրգունձները
ամպարտակները կը կանգնէ իւր փառ-
աւասիրութեան կոթողը միշտ կենդանի
պահելու համար, ժողովրդեան յետին
թշուառութեան հասնիլը եւ միայն
սոխ եւ սխտորով շատնալն իրեն խիլճ'
չններ :

Սողոմոն որ իմաստութեան անուան
տակ իբրեւ Մենոփս կը պարծէր, ար-
քունի պաշտը վաթսուն թագունհիւ-
ներով ութսուն հարձով եւ անթիւ
օրիորդներով կը լեցունէ ժողովրդեան
արեան գին եւ արդար փոստակը կեղե-
քելով նոցա պճնասիրութիւնը կը դու-
հացունէ :

Ահա՛ ասոնք եւ սոցա նման շատերը
կիրքերով զինեալ աշխարհ մտան,
մարդկութեան ուղղութիւնն ու դաշ-
նակութիւն խանգարեցին :

Երբ ժողովուրդ գեղերու եւ աւան-
ներու մէջ իրեն պատապարան գտած
եւ ապստինած էր, բռնապետը զօրքեր
սահմանեց, գունդեր կազմեց նոցա
փառք պատիւ, իշխանութիւն հարըս-
տութիւն խոստացաւ իրեն թիկունք
առաւ իրմէ աւելի չարագոյները, եւ ժո-
ղովրդեան ապաստանարանները քան-
դեց սյրեց, կապտեց կոշոտեց եւ
մոխիրներու վրայ նստեցոյց :

Իրաց այս պարագաներու մէջ երբ
ժողովուրդ հարկադրեալ մաճով ըզ-
թագ պատժելու, մեռնելու եւ կամ
իւր ազատութեան ձեռք բերելու խոր
հուրդները կը յղանար, միւս կողմէն
անդիմադրելի եւ անընկճելի զօրութիւն
մը տեսաւ իւր գլխոյն վրայ կանգնած :

Այս այն խուճին էր, որ ժողովուր-
դեան սրտի ներքին գաղտնեաց բանա-
լին իրեն ձեռք առած ոչ գէնք ունէր
ոչ զօրութիւն, սակայն անպարտելի
անյաղթելի եւ ամենազօրի մը պէս մէկ
ակնարկով կը վտրէր զժողովուրդ որ
կողմ որ ուզէր :

Բռնապետները ժողովրդեան կենաց ընչից և ստացուածոց վրայ կ'իշխէին, իսկ սոքա մարդկանց և Աստուծոյ յարաբերութեանց գաղանկեաց մէջ մտնէին :

Մարդկանց խորհրդոց վրայ թագաւորեցին, հոգիներուն տիրապետեցին, մարդկանց հաւատք քննութեան առին, խարոյկներով պատժեցին, և ժողովուրդն նախապաշարելու և ահաջուցանելու խաբաւ իրենց անասնոց պահելու համար, բարձունքներէն ըստ օրանալիքներ բերին, լեռներու գլուխէն մշուշներու մէջն պատգամներ որոտացին, միայն Աստուծոյ միայն վերստահեալ ներքին գաղանկեաց և խորհրդոց գիտակ ձեւացան, անցեալ ներկայ և ապստնի գալիքներուն նախատեսող հանգիստցան, գժոխքներ կ'ալմեցին և իրենց չը հնազանդողները հոն անշէջ հրով յարատեւ այրելու սպառնալիքը որոտացին :

Արքայութիւն յորինեցին իրենց կառավարները հոն երջանկացուցին : Ուրուականներ ձեւակերպեցին մարդիկ ահացուցին, մէկ մէկ աստուած դարձած տիրեցին և տիրապետեցին, սոքա մէկ կողմէն, բռնաւորն միւս կողմէն, խեղճ ժողովուրդ որ կողմ դարձաւ զինք թակարթի մէջ տեսաւ :

Պարսիկ Արհամ և Ուրմիզգ աստուածները կը ստեղծէ միայն բարեաց և միւսոյն չարեաց հեղինակութիւնը կուտայ, և կրակն 'ի տեղն Աստուծոյ պաշտել կը հրամայէ, եւ նոցա աստուածութեան պաշտօն կ'ընծայէ, չը հնազանդողը հրով կայրի և սրով կը վերջանայ : Լուսնոյ եւ արեգակն երկրպագութեան հրաւեր կը կարգայ ժողովրդեան և անզգայ տարերքներէն յաջողութիւն կը յուսայ, արարածական տարերք Արարչին հետ կը փոխանակէ :

Եգիպտոս, Միսրիսի կովուն աստ-

ուածութեան պատիւը կու տայ, բունական մարդիկն անբանին կը զահէ, անշունչ անզգայ տարերքներէն պատգամ կը ստանայ և ըստ այնմ կը անօրինէ իւր գործերը :

Յունաստան յուրմահարուներ կը ստեղծէ և նոցա աստուածութեան անուններ կ'ընծայէ, և զատ զատ հեղինակութիւններ կու տայ նոցա, այսինքն մին սիրոյ աստուած, միւսն ցանկութեան աստուած, մին յաջողութեան աստուած, ձախորդութեան աստուած, առաջնորդող աստուած, պաշտպան աստուած, ծովու եւ ցամաքի աստուածներ կը սահմանէ, և նոցա պատգամներով զժողովուրդը կը ջլտէ և պղտանական իշխանութիւնը կը հաստատէ, մեղապարտ հոգիները անոր տանջանայ կը մտնեն :

Հնդիկը՝ ինքզինք Քանդէս գետոյն կը նուիրէ եւ ձեռակերտ աստուածներ կը շինէ, ու անոնց առջեւը ծունկ կը խոնարհի, և Պրմաց տուած պատգամներով իւր գործ կը վճարէ նման Եգիպտոսին :

Նաեւ իրենց ազգականները և շատ անգամ ամենատիրելի զաւակները զահ և պատարագ կու տան այն կուռքերուն, զորս տարիէ մը վերջ նախատանօք Քանդէս գետոյն կուր կու տան :

Սէնեացին իւր անթիւ կուռքերը և ձեռակերանները կը մօտեցունէ եւ աստուածական պատուով պատուել կը հարկագրէ զմարդիկ, եւ նոցա զոհեր և պատարագներ կը մատուցանէ, և ժողովրդեան ընտիր կերակուրները և հարստութեան ազնիւները նոցա քուրմիւրուն տալ կը հրամայէ :

Երկնից մէջ երջանկութեան գաւառներ կը շինէ, երկրի տակը տանջանարաններ կը պատրաստէ, միայն մէջ հոգիները կ'երջանկացունէ, միւսոյն մէջ կը դատէ, կը պատժէ, կը չար-

չարէ և միշտ թշուառ կը պահէ :

Հոսիմ մարդարան եւ քաւարան կը շինէ անդգայ և աներեւոյթ մշուշ ներու մէջ, հոգիները հան զրկելով կը սրբէ և կը մաքրէ, և արքայութեան բանալեաց իշխ սնու թիւնը իրեն կը վերապահէ, ու զամ հոգւոյ կը բանայ և չուզածներուն կը զբանայ և դուրս կը թողու :

Սպանիա հաւատաքննութեան աւտեն կը բանայ և ժողովուրդ ուղակեղ կ'ընէ խորոյններուն կը մասնէ : Այս ամեն չարիք միապետ եւ հոգիներու տիրապետ զոյգ գաշնակիցք առին յաշխարհ մտան, մինն որով և միւսն սարսուռներով ժողովրդեան գլուխը կուտեցին կաշկանդեցին անասնացուցին անզգայութեան, իշխեցին տիրեցին գերփեցին և կողոպտեցին :

Ժողովուրդը եւրբ քիչ շատ շարժումն ընել կուզէր միապետաց եւ բռնապետաց անուրը խորտակելու, հոգւոյ տիրապետը երկինց սպառնալիքները դժոխոց սարսուռները և պատիժները կ'առնէր կուգար, և ժողովրդեան անյաջող մէկ գործը և կամ դիպուածական մէկ ձախորդութիւնը, նորա անզգաստութեան և անհնազանդութեան արժանաւոր պատիժը կը համարուէր երկինքէն զինք զգաստացունելու համար :

Եւրբ այս կողմէն յուսահատած իւր հոգւոյ խորհրդին ազատութիւնը եւ իւր գաղտնիքները իրեն վերապահելու խորհուրդ կը յղանար, յանկարծակի բռնապետի սուրը վնայ կը հասնէր և կը դատապարտէր հնազանդելու նախապաշարման, կանխակալ կարծիքներու, երեւակայական ցնորքներու, սին պաշտամունքներու մշուշային որոտումներու և կը սպառնար թէ հնազանդիլ պէտք է այն խումբին, զինորա ատուածոյ խորհրդոյ եւ գաղտնեաց

գիտականներն են, երկրորդունդ յեղաշրջելու կարող եւ ատուածոյ զօրութեան բաժանորդներն են : Ուստի նոցա լսել հնազանդիլ և նոցա տուած պատուէրները կատարել պէտք է առանց քննելու և առանց խորհելու :

Ահա այս եղաւ ժողովրդին վիճակը և ատոր մէջ դատապարտեալ գիշերը անհանգիստ կը հսկէր իւր հոգեպահիկ ընկից և ստացուածոյ և իւր ընտանեկան պատուոյն ապահովութեան համար, ցորեկ շարունակ աշխատութեան դատապարտուած արեւակեղ և ցրտատառոյց և իւր աշխատութեան պտուղները իւր ձեռքով կը տանէր բռնաւորին կը յանձնէր, նորա հանգիստ կը վայելէին և կուրախանային, իսկ ինք միշտ անհանգիստ և միշտ տրտում և յուսահատ էր :

Եւ որ ամենէն անտանելին է, իսկզկայտառ մանուկը որն որ քսան տարուան չարաչոր աշխատութեամբ բերած յարբունա հասակի հասուցած էր, որն որ պատարաստուած էր իւր ծնողաց մխիթարութիւն լինելու նոցա քսան տարուան աշխատութեան քիրտն սլուրելու, աննոց յոգնած միջոցին նոցա օգնելու, ահա կը աւանետ որ անգիւմագրելի ակնարկ մը զայն կը կորզէ իւր ծնողներէն կը տանի կը խառնի այն խումբին, որ հլու հարատակութեամբ մէկ կամաց հրամանակատարներն են :

Այս խումբը ազատ չէ խորհելու, ազատ չէ գիտողութիւն ընելու, ազատ չէ իւր իրեւին եկած գնդակէն երես դարձունելու, այլ թէ միայն ծառայ պատրաստական գիշեր եւ ցորեկ սուր ի ձեռին վայրագ հրամանի մը կը սպասէ, որուն կամ իւր կեանք պիտի տայ և կամ իւր եղբոր կեանք պիտի տայ և կամ իւր եղբոր կեանք պիտի փոխարինէ իւր կենաց :

Զուրկ է ասիկայ ամեն հանգստու

թիւններէ երջանկութիւններէ և ճիշդ այս խնամքներէն Քրոջ և եղբոր բազմընդ տեսութիւններէն, ընտանեաց և զուական անզուգական սիրոյ վայելչութիւններէն, Լեռներու գլուխը գաշտերու մէջ թշնամեաց երկիւղներով պաշարուած իւր կեանք տալու և կամ իւր եղբոր կեանք բառնալով խորհուրդներով հեղձամղձակ զստանցած այս վայելանէս միւս վարկեանին սոսկողի թակարթ մը և ահաբեկ տեսարան մը աչքին առջեւը պատկերացած, մահու և կենաց սատոյի ջերմը և անհամեմատ սառն կարկոտածեւ քրտուներ ոլուն ոլուն կայլակի պէս երեսէն վար կը սորեն, և աչք արտասուք սրտմտութենէն ու բարկութենէն կայծակի պէս գուրս կը ցատկեն, վասնզի այն աչք անգամ եւս իւր սիրելի բարեկամները պիտի տեսնէ՞ թէ ոչ, այս երաշխաւորեալ չէ։ Մանաւանդ զի կը տեսնէ որ մէկ կողմէն սուսերամբոյ և կատաղի արագութեամբ ահագին փունք մը անձրեւոյ պէս իրեն վրայ կը խոցանան կենաց վախճանը տալու, միւս կողմէն թնդանթաղ պատրաստութիւնները որ բերաննին բացած մէկ ուսմբով հաղորաւոր զոհեր կ'անելու պատրաստ կը սրտեն այս ժամէս միւսոյն։

Մէկտը կողմէն կը տեսնէ երեկեան աշիւ սրհակարծան սրտերազմի մէջ իւր նետահար և կամ գնդակով վերաւորեալ եղբայրները արտի մը անկիւն ձգուած անոք և անօգնական անդարման յուսահատ և ճարահատ վիճակի մէջ, վերքերն անբուժելի, վրան բաց, վերքերը հոսած, դարմանող չի կայ արեւու տաքութիւնը և իւր ընտանեաց կարօտութիւնը վերքերէն աւելի զինք կը նեղէն։

«Ո՛հ. Աստուած իմ այս քնքիր աւուներէ, մի՛նն պալատի մէջ հաղարաւոր սպասուորներով և սպասուհիներով

բով հանգիստ կեանք վայելէ, միւսն այս դառն եւ անտանելի վիճակին մասնուիր։ Խեղճ նետահարը փոխանակ բարձիւրի մը կաոր առած գրեխուն տակը, շուրջ իւր բոլորով կը նայի, ոչ որ չունի զինք հոգացող եւ միտթող, շնչատպառ ձայնով մը փութութիւն կ'աղաղակէ, բայց լսող չի կայ, կը պաշարուի մահուն երկիւղներով և մահուան քրտանց մէջ խորաւ սուզուելով այլ յայլմէ եղած, հայր, մայր, քոյր, եղբայր, կին, զաւակ, աղագական և բարեկամ կը կոչէ և կ'ողաղակէ, բայց ոչ որ չի կայ նորա ձայն լսող, ճարահատեալ ձայն նուաղեալ շունչ կը սարսի և հոգին կ'աւանդէ։

Պատերազմելու համար պատրաստուած խեղճ զինուոր երբ այս ամեն աչքով կը տեսնէ, նաեւ իւր չարագուշակ ժամը եկած հասած մահաբոյր վայրագ հրամանը կ'որոտայ 'ի վէն ընդդէմ թշնամեաց բանակին, մեռցունել, և կամ մեռնել։ Նաեւ կը տեսնէ որ անթիւ մարդիկ որոյ ճարակ գնալ ջին և արեան ճապաղիներու մէջ կը լողան, ոմանց թեւը, ոմանց սաքը, ոմանց գլուխ, ոմանց աչք, զոհ կ'առնու թշնամին։

Միւս կողմէն կը տեսնէ որ հաղարաւոր հրացաններ 'ի միասին ձայն կ'արձակեն և այս մէկ ձայնը հաղարաւոր մարդիկ գնդակահար թաւալ գլոր յերկիր կը փռէ և մէկ ձայնով մը վերջին շունչ կը փչեն անոնցմէ շատերը։ Նաեւ կը տեսնէ որ թնդանթաղութեամբ մէկ սրայթումը բանակի կէսը կայծակնահար յերկիր կը թաւալէ, և անոնցմէ այն խումբ որ անմիջապէս չի դիպնալու, այլ միայն իւր անդամներէն մէկն և կամ երկուքն կորսնցուց, նոքա բըժիշկ, դեղ և դարման, օգնութիւն, գթութիւն կ'աղաղակեն, սակայն լսող չի կայ։

Այս ամենը կը տեսնէ խեղճ զինւորն կը սոսկայ կը սրտմտի և ազատութեան կը բաղձայ, բայց ո՞վ կուտայ անոր ազատութիւն, այնպիսի դիրքի մը մէջ է որ ո՛չ առաջ կրնայ ելլալ և ոչ ետ կրնայ դառնալ, զի եթէ առաջ ելլալ թշնամւոյն սուրն է, եթէ ետ դառնայ զինք վարողի սուրն է, ուրեմն պէտք է հնազանդի կամ մեռնի եւ կամ յանիրաւի մեռցունէ իւր եղբայր:

Ա՛հ, խեղճ զինուոր, ո՞վ պիտի ինձ ազատութիւն տար զքեզ համոզելու թէ այդ պատերազմ անիրաւ է, ՚ի զուր կեանք մի տար, և ո՛չ ալ յանիրաւի եղբորդ կեանք վերջացուր:

Ո՞վ պիտի թողարէր ինձ զքեզ և քու ընկերներդ համոզելու և յետս կ'ատելու ձեր ձեռք այդ անմեղ արեանց մէջ չը թաթաւելու, որք ձեր տարաբախտութեան հանդիպած են:

Ո՞վ պիտի ազատութիւն տար ինձ զձեզ համոզելու թէ այդ պատերազմ ո՛չ աշխարհի շինութեան, ո՛չ իրաւանց և արդարութեան և ո՛չ որ և է օգտի համար է, այլ թէ լոկ մէկի մը փառասիրութեան կոթող կանգնեցունելու նպատակաւ է: ուրեմն խնայեցէք ձեր և ձեր եղբոր կենացը:

Ո՞վ պիտի զիս թողարէր զձեզ համոզելու թէ ձեր կեանք գին չ'ունի, դիւրագնի մի վաճառէք, այսպէս ալ յիշեցէք որ մեռնողները ձեր եղբայրներն են, եւ դուք զանոնք միայն չէք մեռցունել, այլ նաեւ անոնց ծնողք ընտանիք, ազգականք և բարեկամք ՚ի միասին կը մեռցունէք, յիշեցէք եթէ դուք այսօր յաջողեք նոցա կեանք բառնալ:

Նաեւ յիշեցէք թէ դուք նոցա հետ, նոցա ընտանեաց սիրտերը կարեւէր և անաղջանալի կը խօցէք, և ձեր բաժինը միայն անէ՞ծք և խղճի խոյթ կը մնայ:

Զօրական, թերեւս ես ազատ լինէի խօսելու, բայց դու բնաւ ազատ չէիր իմ խորհրդեանս լսելու, զի դու ինքնին չը մղուեցար, այլ բռնութիւնը մղեց զքեզ յայսմ:

Զօրական եթէ այդ պատերազմ արդարութեան համար լինէր, թող ես նորա դրոշակակիր լինէի:

Եթէ այդ պատերազմ մարդկութեան հաւասարութեան համար լինէր, ես նորա զոհ և առաջին նահաւատ կը լինէի:

Եթէ այդ պատերազմ մարդկութեան ազատութեան համար լինէր, ես նորա գնատակներուն կուրծքս բացած բազմադիմի վէրքեր թող ընդունած լինէի: Որպէս զի իմ վէրքերովս մարդիկ իրենց կորսնցուցած ազատութիւնը գտնէին:

Բայց աւանդ, որ նոցա համար չէ, այլ թէ միայն երկրագունդէն մաս մի տեղ եւս յափշտակելու տկարներու ձեռքէն, և անորոք մաս մը ժողովուրդ եւս գերելու և կեղեքելու և բռնապետի տիրապետութեան տենչը պատկելու համար է, ուստի շնչին է պատերազմն, և ՚ի զուր և յումպէտս կը զոհուի ձեր կեանք, առանց ձեր կամաց և սրտի յօժարութեան:

Երբ իրենց բանաւարութեան ուղղութիւն կորսնցունող և կիւքերու թելադրութեամբ առաջնորդուող չարաւ միա և չարասիրտ բռնապետները տիրապետները և աշխարհակալներն անխորհուրդ կերպով մարդկութեան վրէժակը վրդոված և նոցա հանգստութիւն կորսնցուցած, արիւնտրբու գազանի պէս նախճիրներ կը գործէին, անմեղ արիւններ կը խմէին, աշխարհ իրենց կրից խաղալիկ դարձուցած կը կայտառէին իրենց մղութեանց մէջ և և կը հեշտանային, տկարները ահով և ու սարսափով պաշարուած համբե-

րելով կը տանէր :

Միուս կողմէն ալ իրենց բռնաւորութիւն չը կորսնցունող կրից վրայ իշխող արդարութեան և ճշմարտութեան հետեւող ազատութիւն սիրող ուղիղ բանաւարութենէն առաջնորդ փողանարատ և մաքուր խղճիդ աէր սակաւութիւ մարդկութե բարերարները և աշխարհի փրկութեան բաղձացողներ եւս կային և կը գործէին անվահեր և աներկիւղ չարչարանաց խաչը ուսերնին առած ընկերական աշխարհին ուղղութիւն տալու և բարի վիճակի վերածելու այլ և այլ ճիւղերու մէջ մէկ մէկ Գողգոթայի զոհ դարձած ուռաջ կը քալէին կ'աշխատէին շարունակ խոհեմութեան շաւղի մէջ կը համբերէին կը տքնէին տիւ և գիւշեր , ի հարկին թշնամոյն նետերու դէմ անվահեր կուրծք կը բանային կը մեռնէին , և իրենց սկզբունքները չէին մեռցուններ :

Նոցա գործերը մէկ մէկ կենդանի կոթողներ դարձան , նոցա արիւնները մեղ գեղ կենաց եղան , նոցա ըսկզբունքները մեղ յաւելրժական յիշատակներ դարձան , և այս աւուր մեր վայելած բոլոր բարիքները զինի նախախնամութեան նոցա վաստակոց արգասիքն է :

Արժան կը դառնիմ այս բարերարաց մի քանիին անունները սողել , որոց առաջինը համարելով սիրոյ , ազատութեան , հաւասարութեան , արդարութեան քարոզիչ աստուածորդին Յիսուս , որ սիրոյ և միութեան հրաւեր կարդաց , ազատութիւն քարոզեց , արդարութիւնը եւ ճշմարտութիւնը սիրեց և կատարեց և մարդիկներուն այս ճանապարհէն երթալու պատուէր տուաւ : Հաւասարութեան գործնական դասը ինք կատարեց և կատարել հրամայեց իւր աշակերտաց : Նրբորի

տակը անդունդներու մէջ թողուած այն սքանչելի օրէնք գտնելով աշխարհին բարւոք կ'առաւարտուելու զեկ մը շինեց , այն է . «Չոր ինչ կամիք թէ աւրացեն ձեզ մարդիկ և դուք արարէք նոցա այնպէս , և զոր ինչ ոչ կամիք թէ արատցեն ձեզ մարդիկ , եւ դուք մի առնէք նոցա » :

Բայց աւանդ որ մանուկ աշխարհ չը կրցաւ նորա խսկական ոգին ըմբռնել , փոխանակ ոգոյն հետեւելու կեղեներու հետ սկսեցին խաղալ , անոր համար եղիցին մի հօտ և մի հովիւ դրութիւնը , յետաձգեցաւ , փոխանակ լոյս ըստանալու , սէր սերմանելու , միութեան հրաւեր կարդալու , արդարութեան և ճշմարտութեան քարոզ լինելու , ազատութեան շահատակներ լինելու , հաւասարութեան զինակիր լինելու , զի ասոնց համար և այս սկրզբունքները աշխարհի մէջ ծաւալելու և տարածելու համար եկած էր , բայց նոքա այսինքն Աստուածորդւոյն հետեւողները , բացառութեամբ մը , ըսկսեցին երկու բնութեան և մէկ բնութեան խնդիրներով խաղալ , Հոգւոյն ի նորէ միայն , թէ ի նորէ և ի յորդուոյ կը բղխի խնդիրներով որոճալ :

Ասով հեռացան իրենց կոչման նըպատակէն և հեռացուցին զժողովուրդըն միութեան դրոշակի տակ մանելէն և փոխանակ հաւաքելոյ ժողովելոյ և միացուցանելոյ , արդէն միացեալները սրուեցին , և արդէն այս կը պահանջէր բաժանասէր միապետաց օգուտըն և շահն :

Գրիգորները , Ներսէսները , Սահակ Մեսրոպները ընդ նոսին և Վառամ Շապուհ լոյս աղաղակեցին , գիտութիւն ստացան և սերմանեցին , որբերը խնամեցին , անկեալ և վերաւորեալները դարմանեցին և ուստապարեցին , ժողովրդեան գիտութիւն սէր և միութեան

Թիւն քարոզեցին և ուսուցին, աղա-
տութեան ջատագով հանդիսացան,
արդարութեամբ լծարեցին իրենց գոր-
ծերը և զժողովուրդն այնպէս ընթա-
նալ պարտաւորեցուցին, աշխատու-
թիւնը յամենայնի յաղթող է քարոզե-
ցին և գնացին:

Նաև գանուեցան այնպիսի իշխա-
ներ և տիրապետներ, որք իրենց բանա-
կանութիւնը ուղղութեան մէջ պահե-
լով կրցան որոշել թէ ի՞նչ է հասարա-
կաց հայր լինելը և թէ պէտք է ժողո-
վուրդը հոււասարութեան մէջ պա-
հել, և թէ պէտք է նոցա գործերը
արդարութեան օրինաց համաձայն դա-
տել, և թէ անիրաւութիւն է նոցա
աղտոտութիւնը բռնաբարել, եւ թէ
անգթութիւն է և հայրութեան պար-
տականութեան դէմ է անկեալ և վի-
րաւորեալն չը խնամել և չը պատասխա-
րել և նոցա պիտոյք չը հոգալ, եւ
թէ եղևնադարձութիւն և զրկողու-
թիւնն է ուրիշ ընչից և ստացուածոց
տիրապետել և գրաւել, և թէ արդա-
րութեան և իրաւանց դէմ է անիրաւ
և փռաօտիրութեան կամ չափաւորու-
թեան համար պատերազմ հրատարա-
կել և անմեղ արիւններ թափել:

Այս եղան այնպիսի իշխանապետ-
ներ եւս որք զժողովուրդը հանգարա
և խաղաղ պահեցին և կառավարեցին,
սակայն սոքա բացառութիւններ հա-
մարուեցան, վասն զի թաւով քիչ է-
ին և իւրեանց իշխանութեան տեւա-
կանութիւնը յոյժ նուազ, որովհետեւ
աշխարհի մեծ մասը ապականուած էր,
չարիքը հոկայաբայլ առաջ կը մղուէր
բարիները շուտով կը վերջանային:
Մանաւանդ երբ բարի իշխանաց չար
որդիք կը յաջորդէին, այն ժամանակ
ժողովուրդն ցաւը կրկին կը լինէր, մինն
բարի իշխանի կորուստը կ'ողբայ, միւսն
չար իշխանի իրենց հատուցած աղէտ,

վիշտ և տառապանքներ կը կրէր:

Մենովս իւր հանձարեղ և անսը-
խալ օրէնքներով Յունաստանին ուղ-
ղութիւն կուտայ և ժողովուրդն այն օ-
րէնքներով բարեպէս կը կ'առաւա-
րուի:

Սեսոսար իւր ժամանակի մէջ Ս-
գիպոսը կերջանկացունէ, ժողովուրդ
դահ և զուարթ կը պահէ այնպէս որ
նորա մահուն օրը առհասարակ լացին
և սուգ պահեցին:

Ահա՛ ասոնք և այսպէս շատերը
զորս վերջէն պիտի յիշեմք բնական լու-
սով բանականութեան ջահ պայծառ
և վառ սրահեցին, ինքեանք բարեպէս
կենցաղավարուեցան և իրենց ժամա-
նակի ժողովուրդին բարեպէս հովուեցին
և սոց բարի յիշատակները պատմու-
թեան հուշին մեզ բերաւ հասոյց, ո-
րոյմէ լոյս եւ յոյս առած կարող եմք
մեր կորուսաները ձեռք բերել և իւ-
րեւ ընկերական մարդ բարեք և եր-
ջանիկ ազատ ու հաւասար ապրիլ աշ-
խարհի մէջ: Բռնութիւնները խորտա-
կել, խաւարները մերժել և հալածել,
փոխանակ մարդոյ՝ օրէնք թաղաւորե-
ցնել, օրինք վարուիլ, օրինք դատել,
օրինք պատժել, օրինք պսակել, ա-
ղտոտ ապրիլ, հոււասար տալիլ, ո՛չ որ
չը վնասել և ո՛չ որ է չը վնասուիլ, զի
այսպէս կը պահանջէ արդարութեան
օրէնքը:

Որովհետեւ բանականութեան խան-
գարումը և կիրքերու զօրանալը զմեզ
բերաւ այս աղէտալի վիճակին հա-
սոյց, ուրեմն մենք քանի որ այսօր մեր
սխալումները կը ճանաչեմք, պէտք է
զայն սրբագրեմք այսինքն կիրքերը նը-
ւաճեմք, բանին ոյժ եւ զօրութիւն
տամք, գիտութիւն և իմաստութիւն
սիրեմք, աշխատեմք և ստանանք, խոր-
հուրդ մեզ առաջնորդ ընտրեմք, վասն
զի այն գործերը որ առանց խորհրդոյ

են միշտ անուղիղ են և սխալ, այս մեզ ցոյց տուաւ անցելոյն կենսագրութիւնը: Քանզի կրից գործերը հաւանական են, բնագոյման գործերը անասնական են, և կոմանց գործերը առանց խորհրդին խառոր և անուղիղ են մանաւանդ յոսի: Խորհուրդն է որ ամենուն ուղղութիւն կուտայ և զանոնք կը կանանաւորէ:

Խորհուրդն է որ սուտն ճշմարտէն, անիրաւութիւն տրդարութեանէն պարտք իրաւունքէն կ'որոշէ և իւրաքանչիւր իրեն տէրօյ կ'ուտայ: Խորհուրդ կ'որոշէ սիրոյ առարկան և նորա սահմանը, խորհուրդ կրնայ գտնել բաժանեալ եղբարց միութեան անքակտելի կապերը: Խորհուրդն պիտի մեզ ցոյց տայ միութեան տրժանիք և անկէ առաջ գալիք արդիւնքները: Խորհուրդ կրնայ հաւաստրապէս բաժանել ուղղութեամբ չափել և կշռել, ուրեմն ամեն բանէն առաջ խորհուրդ պէտք է, զոյգ ընդ գիտութեան և իմաստութեան:

Խորհուրդն պիտի ուսուցանէ մեզ թէ մարդկութեան առաջին զաւակէն սկսեալ մինչև վերջի որդին շղթայի պէս անանջրպետ առինչ կապ ունին իրարու հետ, և մենք մի և նոյն հեղինակի գործ և մի և նոյն ճնողաց զաւակ ենք, ուրեմն իրաւամբ և արդարութեք հաւաստրապէս ժառանգ ենք երկրագունդին և զայն ամենուն հաւաստրապէս բաժնետէ, և որովհետեւ մեր կեանք անոր հետ առինչ է, պէտք է որ մեր բաժին երկրագունդը անկապ տեղի մնայ մինչև մեր կենաց վերջը, ոչ վաճառուի և ոչ գրաւ դրուի, այլ իւրաքանչիւր որ իւր բաժնի մէջ աշխատէ մշակէ և վայելէ, անկարողները աշխատութեան մասին բացառութիւն կը համարուին:

Խորհուրդն կը յղանայ և կը ճաննի

ուսմունք և գիտութիւն, գիտութիւնը իրեն հետ կը բերէ ըյս և ճշմարտութիւն լուսոյ առջեւէն խաւար տեղի կ'ուտայ, և կը հարածուի և իրեն հետ կը տանի և կանհետացնէ խաւարային ամեն գործերը, և յետ այնորիկ ամեն բան պայծառ կը տեսնուի, և պարզ ճշմարտութիւնը իւր յաղթանակաւ կը թափաւորէ և ամեն բան իւր իսկական պատկերով ցոյց կուտայ աշխարհին:

Ճշմարտութեան կեզմքները կը մերժէ, և ճշմարտ սիրով կը կապէ և կը միացնէ մարդիկ իրարու հետ սիրոյ սահմանը ընդարձակէ, սիրոյ կապերը անխլելի են երբ ճշմարտ են, հետեւաբար սիրոյ միութիւնը անքակտելի անպարտելի և անյաղթելի է:

Սիրոյ վրայ դրուած է աշխարհի սիւները, վերցուր սէրը և ահա աշխարհ վերիվայր կը տապալի, ինչպէս որ եղաւ իսկ ատելութեան թափաւորութեան միջոցին սիրով հաստատուեցաւ աշխարհ, սիրով պիտի կ'առաւարուի, սիրով և միութեամբ պիտի փրկուի, և միութիւնը սիրոյ արդասիքն է:

Միութիւն զորաւոր է և անյաղթելի, ամեն զօրութիւն բաց 'ի Վաստուծոյ, միութեան առջեւ կը տկարանայ, Լեռները անոր առջեւ կը խոնարհին, զօրաւորները, նորա քով կը տկարանան, 'ի մի բան զկնի Արարչին միութիւնը տիեզերաց բնութիւնն է: Ուրեմն միանալ պէտք է յաղթելու համար, աշխատիլ պէտք է շինելու համար: Բռնաւորաց ոյժը մեր միութեան մէջն է, բաժանեալ ուժաւորները մէկիկ մէկիկ գոյլերուն կուր կերթան: Իսկ երբ կը միանան, դադանը նոցա մէջ մուտք չի կրնար դանել:

Միեակ ծառը հողմակոծեալ կը տալու բերի, առանձին տուննին արեւու տապէն կը թռչնի, իսկ երբ խմբովն

Ճէյմս Ուօդ , տաժանեղի աշխա-
տութեամբ շոգեշարժ մեքենայի ազ-
նիւ գիւտը բերաւ յօգուտ աշխարհի :

Ճօրձ մեքենադորձ 'ի ձեռն աշ-
խատութեան շոգեկառքի հնարքն գը-
տաւ եւ աշխարհի հանգստութեան
դիւրութիւն մը ընծայեց :

Վօքանսօն , աշխատութեամբ մե-
քենայութեան մէջ ինքնաշարժ գոր-
ծիքներ հնարեց :

Պէնճամին Ֆրանգլին , աշխատու-
թեամբ , կայծակի ելեքարականութե-
հետ ունեցած առնչութիւնը գտաւ ,
և անոր վնասոյն դէմ շանթարդելք
հնարեց :

Զանց կ'առնում այն սքանչելի փի-
լիսոփայները որք յարատեւ աշխատու-
թեամբ մեծ մարդիկ և մարդկութեան
բարոյական աստուածները և փրկիչ-
ները եղան անոնց բանաւարութեան
ուղղութիւններ տալով , անասնական
նուստս վիճակներէն մարդկութեան
վէհ գահոյն բարձրացուցին :

Ահա սոքա են ընկերական աշխար-
հի փրկիչ և բարերարները , որք իրենց
յարատեւ շարունակ աշխատութեամբ
և միութեամբ ամեն դժուարութեանց
յաղթեցին և աշխարհ վերանորոգեցին
շինեցին պայծառացուցին յօգուտ և
'ի հանգստութիւն ներկայ սերնդոցս :

Թող տեսնեն և պատկառին իրենց
շիրիմներէն այն անձնիք , որք կիրքե-
րէն վարակեալ մարդկութեան նշանա-
բանը կորսնցուցած մէկ մէկ տղրուկ
դարձած ժողովրդին հոգին և մարմին
'ի միասին կը մահացունէին :

Թող աեսնեն և համոզուին այն մեծ
կարծուած մարդիկ , որ նախապաշար-
ման շնորհիւ անաշխատ եւ անվաս-
տակ մեծութեան անուան տակ բարձր
տեղերը և աթոռներու վրայ նստած
իբրեւ իշամեղու նենգութեան հնարք-
ներով ուրիշին վատտակը մտած , նոցա

արդիւնքը կուտեն սին սաղարթներով
ղարդարեալ և պաճուճեալ , թող հա-
մոզուին , որ իրենք չեն մեծ մարդիկ ,
այլ սոքա , թող համոզուին որ իրենք
չեն մարդկութեան և աշխարհի բա-
րերարները աէր և իշխանները , հասա-
րակաց հայրերը , որբոց և այրեաց խը-
նամակալները , այլ սոքա են , սոքա , ո-
րոց գործերը անպարտելի եւ անյաղ-
թելի կոթողներու պէս կը վկայեն եւ
կը հաստատեն ու ցոյց կուտան :

Ուրեմն թող օրհնեալ ըլլան անոնք ,
թող աճի և բազմանայ նոցա տեսակը
եւ նմանիք , որպէս զի բազմանալով
աշխարհին ուղղութիւն տան , մար-
դիկ աղչտեն և հաւատարութեան մէջ
պահեն :

Նաեւ մեզ թող առաջնորդ լինի
նոցա գործնական դասը , եթէ ազա-
տութեան հաւատարութիւնը կը սի-
րեմք , պէտք է , որ մեր կիրքերը եթէ
ոչ խապառ ջնջեմք , գոնէ չափաւորեմք
և ուղիղ բանաւարութեան հպատակե-
ցունեմք , խորհուրդ մեզ առաջնորդ
ընտրեմք , խորհրդով միանամք , սէրն
մեզ դաշնակից ընեմք , զի անկեղծ սի-
րոյ դաշինք անխղելի և անքակտելի է ,
գիտութեան լոյսը մեր օրտերու մէջ
վառ պահեմք :

Խորհիլ պէտք է հասուն խորհըր-
դով , գործել պէտք է անընդհատ և
շարունակ , թող համբ լինի հոգ չէ ,
չատ է որ խոհեմութեան շաւղի մէջ
լինի և անընդհատ :

Խորհիմք զիրար սիրելու համար , զի
ամենքս մի և նոյն Արարչի արարածնե-
րը եւ մի և նոյն ծնողաց զաւակներն
եմք , հաւասար եղբայրներ , ժառանգ
և ժառանգակիցք միմեանց հաւասա-
րապէս սրարտուց կատարող թէ Աս-
տուծոյ թէ մարդկութեան եւ թէ
երկրագունդին , այսպէս ալ հաւասա-
րապէս բաժին և իրաւունք ունիմք եւ

են անշխատ են և ապահով :

Ուրեմն միութիւն պէտք է և յարատեւ աշխատութիւն , ասոնք ամեն բանի յաղթող են :

Եթէ ինձ չէք հաւատար , գործերուն հաւատացէք , զի գործերը ինքնին կը քարոզեն կը համոզեն , կան ու կը մնան :

Միութիւնը եւ աշխատութիւնը աշխարհի արեւելեան ծայր արեւմտեան ծայրի հետ միացոյց և հեռագրով կապեց , և ամենատկար ձայնը մէկ հնչմամբ բոլոր երկրագունդին կը հաղորդուի : Կարծիքները անմիջական կերպով կ'առնուին և կը տրուին , արեւելեան ծայրէն արեւմտեան ծայր մէկ ակնարկով մը ընկերական ամեն շահերը կը զիտէ և կը տեսնէ :

Միութեան յոյժը եւ աշխատութեան արդիւնքն եղաւ Սուէշի Արեւի բացումը որ անհուն հեռաւոր երկիրներ իրարու մօտեցոյց և ընկերական աշխարհի շահերը գիւրութիւնները և հանգստութիւնները առաջ բերաւ և ուղիւսնոսի վտանգները անհետացոյց :

Միութեան ուժով և աշխատութեան հնարիւք շոգենաւերը ծնան , որք ուղիւսնոսի անպարտելի և անխորտակելի ալիքներու հետ մրցելով եւ յաղթելով կայծակի արագութեամբ մէկ երկրի աւելորդ բարիքներով միւսոյն պէտքն կը լեցունէ : Քաղաքները և գաւառները կը տեղափոխէ , մարդկանց հանգստութեան գիւրութիւն կու տայ :

Միութեան ոգին եւ աշխատութեան յարատեւութիւնն , այն հրաշալի շոգեկառք բերաւ յաշխարհ , որ մէկ ցնցմամբ քաղաքները իրարու տեղը կը փոխադրէ , երկոտասանօրեայ գիւրութիւնները մի օրեայ գիւրութիւն կը վերածէ , հազարաւոր մարդ-

կանց կտրողութենէն և ձեռնհասութենէն վեր դատուած իրերը փոքր շոգիի մը զօրութեամբ աշխարհի մէկ ծայրէն միւս ծայր կը փոխադրէ , եւ աշխարհիս զարմանալի տեսարան մը կ'ընծայէ :

Ահա միութեան և աշխատութեան արդիւնքները որք խկապէս մէկ մէկ հրաշալիքներն են և մարդկանց հանգստութեան յենարաններ : Եւ ոչ թէ այն փառամոլութեանց կոթորնները որք աշխարհ տառապեցուցին , փոխանակ շինելու քանդելուն և անպոտու ծառի պէս չորացան և անհետ եղան :

Աշխատութիւնները մէկ մէկ խոտաւէտ ծաղիկներ են զանազան լեռներու գլուխները բուսած , երբ միութեան ոգին զանոնք 'ի մի կը հուարէ և փունջ կը կապէ , նոցա անուշահոտ բուրումները իրարու հետ գրկախառնեալ մարդկանց հոտոտելաց զմայլու մի կու տան և զայն կը զուարթացունեն և կը զուարճացունեն :

Ուրեմն անհատապէս աշխատիմք , միանալի աշխատիմք վերջապէս շարունակ աշխատիմք մինչեւ մեր կուրուստը ձեռք բերեմք , վասն զի փորձառութիւնները մեզ կը սորվեցունեն որ ինչ որ ձեռք բերել կուզեմք ամենքն ալ միութեամբ և աշխատութեամբ կարելի է ստանալ և ոչ սւրիշ միջոցով : Աշխատութիւնը չէ թէ միմեկի կորստեւած կը գտնէ , այլ և չեղածները կը ստեղծէ և կը հրաշագործէ , յերկինս կը բնէ :

Եթէ չես հաւատար ահա փորձերը : Կապերնիկ աշխատութեամբ մուրահայ արեւմուտքէն յարեւելս արեւու շուրջ գառնալը գտաւ :

Կոլումպոս , աշխատութեամբ երկրաչափութեան և աստղագիտութեան մէջ այնչափ առաջ դնաց , որոյ շնորհիւ յաջողեցաւ անձանթ Սմերիկան գտնել :

րեքէն ևս ասիկայ անմխտելի է, և ան-
ուրանայի :

Եթէ խորհիմք կուտանիմք այն ա-
մեն բաները ինչ որ մենք չեմք գիտեր ,
և ինչ որ ճշմարտութիւններ են , եթէ
ուսանիմք , ինքնաբերաբար կը ստիպ-
ուիմք օրելու , եթէ օրեմք կը միա-
նամք , եթէ միանամք՝ կը գործեմք :

Եթէ միանամք և գործեմք խորհրդ-
դով , մեր ուժը անընկձելի է և մենք
ամենուրոր , յետ այնորիկ միապէս և
հաւասարապէս ամենքս ազատ եմք և
ամենքս հաւատար , հետեւաբար փո-
խանակ բռնապետին արդարութեան
օրէնք կը թագաւորէ , ամենուս վրայ
հաւատարապէս իշխելով :

ԽՈՐԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԻԻԹԱՐԵԱՆ

ԿԻՍԱԽԷՐ ԵԿԵՂԵՏԻ ՀԱՅՈՑ

Ի ԳԻԻՂՆ ԷԼԻԲԻՐԷՀ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Ճանապարհորդներէն
կը լուէր , որ Լյուռաաղեմէն ՚ի Հիւ-
սիս , երկու ու կէս մղն կամ երեք
ժամ հեռաւորութեամբ , Եապրուսի
Ճանապարհին վերայ , Լյուիրէհ , ըստ
Ս . Ղրոյ , Բէէրօթ գիւղի մէջ , կի-
սաւէր եկեղեցի մի կայ , որ հայերէն
արձանագրութիւններ ունի , բայց
հիմնաւոր արդիւնք չը կար :

Երկրայ ամուսյս մէջ խորհրդակ-
ցութեամբ եւ ընկերակցութեամբ
հարցասէր միաբան եղբարց ոմանց գը-
նացիմք յիշեալ Լյուիրէհ գիւղն և աե-
սանք կիսաւէր եկեղեցին , որ շինուած
է յիշեալ գիւղին բարձրաւանդակին
վերայ , որոյ չըջսկայքն կը գտնուին տե-

ղական Լրար շինականաց տուներն :
Լիկեղեցւոյ երեք սեղաններն մինչեւ
ցկամարն և հիւսիսային ու հարաւա-
յին պատերն տակաւին կանգուն են ,
իսկ արեւմտեան կողմն , ուր գտնը-
ւած է նախագաւիթն , բոլորովին քա-
կուած է և նոր ժամանակներս բան
ջարեղինաց սրարիղի հասարակ պա-
տով պատուած : Լիկեղեցին զբեթէ
քառակուսի ձեւ ունի , 34 մետր եր-
կայնութեամբ եւ 20 մետր լայնու-
թեամբ : Սեղաններու և հարաւային
ու հիւսիսային կանգուն մնացած սյու-
տերու քարերէն կ'երեւի յայտնապէս ,
որ եկեղեցին շինուած է խիտ ընտիր
ճաշակաւ , ընտիր տեւական և սրբա-
տաշ քարերով , օխնեքով և խոյակնե-
քով , ունեցած է երկու մեծ դմբէթ
միջովայրին և աւագ խորանին վերայ
և թերեւս երկու փոքր դմբէթ երկու
փոքր խորաններուն վերայ , թէև թը-
ւական չը կայ , բայց հնագիտական
հետազոտութիւնն ցոյց կը տայ , որ
աւելի քան ութ կամ եօթն հարիւր
տարուան շէնք է , և եթէ ոչ յառաջ
անշուշտ մեր Ռուբենեան թագա-
ւորական հարստութեան ժամանակ
շինուած է : Լիկեղեցւոյ միջնավայրն
հողով լցուած է , այնպէս որ հողն սե-
ղաններու լուսամուտներուն հասած է
և բեմերն ծածկած :

Քանի մի հատ հինօրեայ նոնենի-
ներ կան եկեղեցւոյն մէջ , որով եւ
յայտնի է թէ երկար ժամանակէն ՚ի
վեր վիշտ է , Հարաւային պատին
վերայ , ուր նոնենի մի յեցած է , կայ
արձանագիր , մեծաւ մասամբ անվը-
ճանելի , երկու հարիւր տարի առաջ
փորագրուած , Պետրոս անուն վար-
դապետի ձեռամբ , որ թերեւս իբրև
Ճանապարհորդ անցնելով և հայկա-
կան հնութիւնն նշմարելով իւր անու-
նին քանդակած է , ինչպէս սովորու-

Թիւն է հաստիքաց իրենց անունն տե-
ռած տեղւոյն վերայ նշանագրել: Ա-
ւագ խորանին կամարկապ կիսագոտ-
ւոյն վերայ եւս հայկական գրերու
հետքեր կը նշմարուին, բայց եղծուած
լինելով չեն կարդացուիր:

Տեղական աւանդութեան նայե-
լով եկեղեցին շինուած է այն տեղւոյն
վերայ, ուր մեր Փրկչի ծնողքն նշմա-
րած են, որ Սանուկն իրենց հետ չէ,
այլ մնացած է Սողոմոնեան Տաճարի
հին օրինաց ուսուցիչներուն կամ վար-
դապետներուն մէջ: Սոյն Աւետարա-
նական խորհրդաւոր յիշատակն յարա-
տեւ պահպանելու համար շինուած
է եկեղեցին, որ ամեն մասամբ հոյա-
կապ է, իւր նուիրական հոյակապ յի-
շատակին համեմատ:

Ով որ Հայաստանի մէջ չըջագա-
յած է և կիսաւէր վանքերն ու եկե-
ղեցիներն տեսած, առաջին նայուած-
քով կարող է վկայել, որ Լլեքիէ հիւ-
ղի եկեղեցին Հայկական եկեղեցի
է և Պաղէստինի մէջ նշանաւոր Հայ-
կական հնութիւն, ինչպէս է Ձիթե-
նեաց լերան վրայ գտնուած հնութիւ-
նըն՝ Ռուսաց ձեռամբ, որ Զ դարու
Հայ - Նախարարական ճոխութեան
սքանչելի մնացորդ է:

Օլորմանալի է, որ Պ. Վ. օկէ,
իւր «Եկեղի» Ս. Երկի» անուն տե-
ղագրական գործոյն մէջ, առանց որ
և իղէ հուանական փաստի, յիշեալ
եկեղեցւոյ շինութիւնն խաչակրաց կրն-
ծայէ, գտնէ չը նկատելով, որ եկեղե-
ցին բնաւ լատինական ձեւ չունի:

Ինչպէս կ'երեւի սոյն մեծագործ յի-
շատահարանաց մնացորդներէն, Հայք
ի հնումն մեծ գաղթականութիւն ու-
նեցած են Ս. Երկրին մէջ և իշխանա-
կան մեծ աղգեցութիւն, որ արհաւ-
րալից դարերուն մէջ միջոց գտած են
այսպիսի հոյակապ տաճարներ կա-

ռուցանել: Աւանդութիւն կայ Լլեքի-
իէ հիւղի Արար բնակչաց մէջ, որ
ով որ յիշեալ եկեղեցւոյ քարերէն քան-
դած և տարած է, ընտանեկան մեծ
վնասներ կրած է, և Թերեւս սոյն ա-
ւանդութեան շնորհիւ է, որ բնա-
կիչք եկեղեցւոյ կանգուն պատերն
չեն կործաներ և քարերն ուրիշ շինու-
թեանց համար գործ ածեր:

Տարախոյս չը կայ, որ սոյն տխուր
աւերակն խոր տպաւորութիւն ըրաւ
մեզ վերայ և գրեթէ ամենեքեանքս
զգածեալ եւ յարտատուս շարժեալ
Թողինք զայն և դարձանք Աշրուսա-
ղէմ:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՌՈՒԲԻՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅԵԴԵՍԻԱՅ

Ռուբինեան Ընկերութեան Վար-
ժարանի Տեսչութիւնն քանի մի ճա-
ռեր և տաղաչափութիւններ զրկած է
Խմբագրութեան՝ տպագրելու համար
Ինչպէս կ'երեւի, զրկուած գրութիւն-
ներէն, բուականին քանք և աշխա-
տանք կը լինին յիշեալ վարժարանի յա-
ռաջագիմութեան համար, որոյ մասին
գոհութեան արժանի է Ռուբինեան
Ընկերութիւնն: Վասն որոյ և մեր ի
խրախոյս և ի քաջալերու թիւն նորին,
զրկուած տաղաչափութիւններէն կը
հրատարակեմք ահա հետեւեալն:

Ա Ռ Ա Ձ Գ Ն Հ Ա Յ Ո Յ

Ուր բժիշկ	մեր իմաստուն	զիմ վէրքերս	արդ մեր ասեմ
Տիւ գիշեր	լամ ու ողբամ	ո՛ տայր գլխուս	իմ ջուր ասեմ
Սուգ առեալ	ցաւ 'ի սիրտ	միշտ տրտում	և տխուր ասեմ
Մեր Հայոց	պատմութիւն	աղեկիզեաց	զերթ հուր ասեմ
Սիրելիս	'ի լսելիս	ահ և երկիւղ	սառսուռ ասեմ
Գրեցից	եւ ճառեցից	համբոյցեմ մի	թէ լուռ ասեմ
Ուր բժիշկ	մեր իմաստուն	զիմ վէրքերս	արդ մեր ասեմ
Թող լսեն	քաջ իմանան	աստուածային	ձիրքն Հայոց
Ամէն ազգ	կը վկայէ	ոչ թէ միայն	գիրքն Հայոց
Զի Տերամբ	զօրացեալ էր	ուր և ուրեք	ձեռքն Հայոց
Արդ աւաղ	մեր մնացին	արի քաջքն	գիրքն Հայոց
Կորոյս թագ	գաւաղանը	ատելութեան	կիրքն Հայոց
Իւր յարգը	մեր է փառքը	վարքը բարքը	մաքուր ասեմ
Սիրելիքն	զմեղ մոռցան	եւ բարեկամք	Ուր բժ
Հովիւը	հարին հօտը	ցրուեցին ոչ	արագ թողին
Տղուկի	պէս ծծեցին	ոչ արիւն ոչ	ճարակ թողին
Զի զմեղ	ամէն ազգի	օրինակ եւ	երակ թողին
Մեր Հայոց	պատմիչները	սրտերնուս մէջ	առակ թողին
Ի բընոյ	ղարթուցանել	զմեղ յայտմ	կրակ թողին
Ուրիշ ազգ	յառաջագէմ	հանգիստցան	աւուր ասեմ
Զենք նայիր	լոյս է ծագեր	մեր մտաց աչքը	Ուր բժ
Ի խաւար	տգիտութեան	իսկ կորստեան	իմացեր ենք
Անձանօթ	երկիրները	թափառական	գուռ բացեր ենք
Զրկեալ իսկ	հայրենիքէն	պանդուխտ գերի	գնացեր ենք
Կորեցին	մեր թիւ թիկունք	միայն արդեօք	մնացեր ենք
Լաւ անուան	տէր են նախնիք	մէք վատութեան	փետուր ասեմ
Երկիւղը	մէկդի ձգենք	մէք չը մնանք	Ուր բժ
Նորոգեալ	սիրով լեցունք	վհատութեան	մէք չը մնանք
Զի լոյս է	գիտութիւնը	հին փտութեան	մէք չը մնանք
Հաւատ յոյս	տէր ստանանք	տգիտութեան	մէք չը մնանք
Եթէ ոչ	կրտսդանայ Տէր	երկմտութեան	մէք չը մնանք
Յետնեալքն	յառաջ ելին	մեղ բարկութեան	մէք չը մնանք
Արդ ահա	զարմանալի	զի փոթ ընդ փոթ	միայն արդեօք
Այս օրըս	կը վայելեն	անէ ի՞նչ հրա	մէք չը մնանք
Կը յարգեն	հնօթիւնը	հանգստութեան	մէք չը մնանք
Իրենց ազգ	պաշտպանելու	եւ նորանոր	մէք չը մնանք
Քաջակիրթ	ամէն կերպով	պարփակելու	մէք չը մնանք
		և հաստատեալ	մէք չը մնանք

Գանդատ ինչ երբէք չունիմ սուրբ կաթին մայ բենի մասին .
 Քաջ Հայկի սերունդէն ենք մեր նախնի հայ բենի մասին .
 Կարեկից պարտիմք լինել Հայ ազգիս ա բենի մասին .
 Քաջ հովուաց կարի փոյթ է զի կրթել վայ բենի մասին .
 Սխեր թող հռչակէ պատուարժան Սուրենի մասին .
 Քէօրգէ՛ , ձեռն պատրաստ, օն պատասխան շուտ տուր ասեմ : Ուր .

Ռոբինեան Ընկերութեան
 Գլխաւորի Տեսուչ Մանկեայ Գէորգ
 Վրդանիսեան :

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Շ Է Ն Ք Ե Ր

Ի ՀԵՈՒՄՆ Եգիպտոսի մեհեան-
 ներն և Միջին Գարու մէջ քրիստոնէ-
 ական տաճարներն այնպիսի վայելուչ
 կերպիւ շինուած , կերտուած և յար-
 դարուած էին , որ գրեթէ բովանդակ
 պաշտամունքն կը պատկերանար աչաց
 առջեւ : Արուեստն ու ճարտարապե-
 տունն իրենց բոլոր ոյժն կը թափէին ,
 որպէս զի խորհրդաւոր նշաններու և
 քանդակներու միջոցաւ խորապաւորեն
 մարդոց մտաց և սրտի մէջ պաշտաման
 վերացական ճմարտութիւններն Յիւ-
 ղեցին կամ տաճարն իսկապէս մի քը-
 րիստոնէական գիրք էր , կարդալու և
 ըմբռնելու համար ժողովրդի աչաց
 առջեւ պատկերացած , ինչպէս որ մի
 գիրք էր նմանապէս եգիպտական մե-
 հեանն կռապաշտութեան համար :

Գպրոցն եւս , իբրեւ ուսման եւ
 գիտութեան տաճար , մեծ նշանակու-
 թիւն ունի շինութեան կողմէն : Այս
 նշանակութիւնն բազմաձախ չքեղու-
 թեան և հոյակապութեան մասին չէ ,
 այլ վայելութեան , յարմարութեան
 և պատշաճաւորութեան :

Գպրոցի շէնքն պէտք է լինի ճար-
 տարապետական պարզ ոճով կամ ճա-
 շակաւ , բայց առանց մեծ ծախուց .
 կարելի է շինութեանն վայելութիւն
 տալ թէ՛ գիծերու եւ համեմատու-
 թիւններու դաշնակաւորութեւ և թէ՛
 գունաւոր աղիւսներու և տեսակ տե-
 սակ կաղապարներու գործածութեամբ ,
 ինչպէս են Փերմանիոյ դպրոցներու
 շէնքերն մեծաւ մասամբ :

Գպրոցն պէտք է ունենայ սարտեզ ,
 բաւականաչափ գետին իւր առջեւ
 կամ աչաց տեսութիւնն պարարող
 ծաղկանոց , ուր ծաղկունք իրենց երփ-
 ներանգ գուններով և բաղեղներն իրենց
 մշտադալար կանաչութեամբ զարդա-
 րեն և պսակեն դպրոցական շէնքն :
 Մեծ վայելութիւն կարող են տալ նա-
 և սիրուն և կանաչադեղ ծառերն ,

Այս դպրոցի արտաքին կողմն է .
 իսկ ՚ի ներքուստ դպրոցի պատերուն
 վերայ սիրտի լինին սեաւ տախտակներ ,
 ուր ուսուցիչն կարենայ պատկերացնել
 իւր բացատրութիւններն , սխալի լինին
 աշխարհագրան բաղմութիւ քարտեզ

ներ, քանի մի մեծամեծ պատկերներ, որք ներկայացնեն պատմական նշանաւոր անցքեր եւ անձնութիւններ, որք անապատութեան արաքներ: Պիտի լինին մեծ մարդկանց գաճեղէն կամ բռեայ կիսարձաններ, զանազան հանքաց եւ բուսոց օրինակներ կամ տեսակներ, կշիռներ և չափեր, մետրական կամ չափական դրութեամբ պատրաստած: Վերջապէս պիտի լինին տեսակ տեսակ առականներ, որոց տեսութեամբ կամ զննութեամբ հրնարաւոր լինի բնական գիտութեանց մասին ծանօթութիւններ եւ ճաշակ ստանալ: Աչաց տեսութեամբ է, որ սկէտք է միայն բանալ եւ բմբռնել տալ ամեն բան, ինչ որ կամինք մտաց մէջ քանդակել և տպաւորել: Առարկաներով ուսուցանելն ամենէն լաւ եղանակն է և կարելի է ուսման ամեն ճիւղերու մէջ դործադրել:

Յայտնի է, որ մեր ազգային դրսերոցներն բոլորովին դատարկ և մերկ են, միջոցա կարելի է սակաւ ծախիւք այնպիսի առարկաներով ծոխացնել, որոնք կարող են արուեստից ճաշակ զարթոցանել եւ մտաց զննելու եւ գիտելու կարողութիւնն սրել, որ խիստ կարեւոր է ամեն վիճակի և ամեն կարգի մարդկանց համար:

Յուշալի է, որ մեր դպրոցներն տակաւին և ոչ մի տեղ յարգարուած եւ զարգարուած են ամենապիտանի զարդերով, որոնք խիստ կարեւոր են և կալօռ չեն մեծամեծ ծախուց:

Աւերակայ երկաթեղեաց կայարաններն անգամ իրենց պատերուն և առատաղնեւուն վերայ այնչափ ուսումնասիրական նկարներ եւ պատկերներ կը ներկայացնեն, որ մարդ կը զմայլի, իսկ մեր դպրոցներն, որոնք բուն ուսման տեղիք են, խաղառ մերկ են և թափուր, և վերացականութեամբ ու

զորմելի մանուկներն զղուեցնելէն եւ ապուշներ պատրաստելէն զինի՝ անդադար կը գանգատինք, որ մեր դրսերոցներն արդիւնք չունին, անբարեկարգ են, և այլն և այլն:

Մեր դպրոցական շէնքերու մասին չենք ուզեր խօսիլ. վասն զի մեր դրսերոցական շէնքերն, քանի մի սակաւաթիւ բացառութեամբ, տյնչափ հեռի են դպրոցական յարմարութենէ, թէ և շատերն մեծ ծախիւք շինուած, որ աւելի բանտ քան թէ դպրոց կարելի է անուանել:



Ն Ի Ի Թ Ք Ո Ւ Ս Մ Ա Ն

Նախնական դպրոցներու համար

ՈՒՍՄԱՆ, կամ, աւելի լաւ եւս աւել, դաստիարակութեան նպատակն է ամենէն առաջ զօրացնել բարոյական զգացումն, և ասոր զարգացնել մտաց և մարմնոց զօրութիւնն: Գաստիարակութիւն բարոյական, մտաւորական և ֆիզիքական, ահա՛ անպայման կարեւոր նպատակ ուսման:

Կրօնքն ու բարոյագիտութիւնն գլխաւոր առարկայք են ուսման եւ այս մասին ամենեքեան պարտին հոգ տանիլ, մանաւանդ եկեղեցականք կամ պաշտօնեայք Աւետարանի Բայց կրօնք և բարոյականի ուսուցչութիւնն ուսման բոլոր ճիւղերուն մէջ ամենէն փափկագոյնն է և վսեմագոյնն: Անգիր կամ ի բերան սերտել տալ չափերովն քանի մի կրօնական և բարոյական սահմանափակ հաւատարմարտումներ և գիտելիքներ չը նշանակէր կրօն և բարոյականութիւն ուսուցանել: Այն մեծամեծ գաղափարներն կամ ճանաչողութիւններն որոնք կը վերաբերին Աստուծոյ, պարտուց, մարդասիրութեան,

մարդկային եղբայրութեան, մարդկային խոնարհութեան և արժանաւորութեան, այս գաղափարներն պէտք է որ ուսուցչի սրտէն անցնին աշակերտներու սիրտըն թէ բոլորանգակ ուսուցմամբ, թէ պատմելով, թէ դուրսցելով, թէ օրինակներով և թէ ամեն խօսքերով ու բառերով, որոնք աշակերտի ականջին կը հասնին : Աւսման ամենէն դժուարին մասն է այս, ուստի և խիստ խորին ու շաղկապուն գարձներու է ուսուցչի շնորհը պատրաստել այս մասին : Վասն զի կրօնի և բարոյականի նկատմամբ, եւ թէ սրտէ ՚ի սիրտ անանցում չը կայ, եւ թէ ուսուցչէն առ աշակերտն, բանիւ, գործով, կրօնական և բարոյական ցերմութեան հաղորդակցութիւն չը կայ, կարող ենք համարձակ ասել, որ լոկ ձեւաբանական սերտողութիւններն, առանց զգացման և ոգեւորութեան լոկ բառերու կրկնութիւններն, որչափ եւս անսխալ լինին, ոչ միայն օգուտ չունին, այլ և վնասակար են, վասն զի կրօնն ու բարոյական կարող են բառախաղութեան և ծաղու առարկայ դառնալ աշակերտի համար և փոխանակ կրօնական ու բարոյական մարդ լինելու՝ կարող է շատախօս և անսիրտ իմաստակ լինիլ :

Լաւ կարգալն և գրելն եւս կարեւոր են : Արդարեւ կարգալն ու գրելն ինքնին գործիք են ուսման, քան թէ մասն ուսման, բայց այնպիսի գործիք են, որով մարդ կարող է ամեն գիտութեանց խորն թափանցիլ : Թրւագիտութիւնն, աշխարհագրութիւնն եւ չափական ուսմունքներն գրեթէ սովորական են ամեն դպրոցական ծրարագիրներու մէջ : Բայց այս սովորականներուն վերայ պէտք է յաւելուլ ընդհանուր ծանօթութիւններ քաղաքական սահմանադրութեան և կազմութեան վերայ, քաղաքացւոյ պար-

տուց ու իրաւանց վերայ, ինչպէս եւ Ամերիկայի, Բելճիքայի և այլ յառաջագէմ երկիրներու դպրոցական ծրագիրներն : Պէտք է յաւելուլ նաեւ ծանօթութիւններ առողջապահութեան վերայ, ընտանեկան անտեսութեան վերայ, ձեռագործութիւն իգական սեռի համար, երկրագործական տեղեկութիւններ շինական մանուկներու համար, պատմութե գլխաւոր և երեւելի անցքեր, և մանաւանդ այնպիսի կենսագրութիւններ, որոնք աշակերտի մտքին կրննրկայացնեն քրիստոնէի, հայրենասիրի, գիւտ հնարողի, ճանապարհորդի, նաւորդի և արուեստաւորի գեղեցիկ արիւարներ եւ օրինակներ : Այս ծանօթութիւններն և տեղեկութիւններն պիտի չը լինին իրրեւ իմաստակօրէն ուսանելու յատուկ ուսման ճիւղեր մանկան յիշողութիւնն ծանրաբեռնելու համար, այլ բաւական է միայն որ ուսուցչի ընտրանքը այսպիսի բաներ կորդայ և բացատրէ :

Այս տեսակ ծանօթութիւններն աւելի լաւ է տեսանելի կերպիւ ուսուցանել, այն է պատկերներով, նրկարներով, կամ որ և իցէ եղանակաւ դէմ յանդիման առաջի աչաց պատկերելով, ինչպէս է Մաքսմիլիոյ և Բադի դրսութեան դպրոցներուն մէջ :

Մոռնալու չէ նմանեպէս երաժշտութիւնն և գծագրութիւնն : Երաժշտութեան նկատմամբ Գերմանիոյ դպրոցներն սքանչելի օրինակ են ամենուն համար : Երգերն և պարուհաւաճ խօսքերն, երբ մեծ ուշադրութեամբ ընտրուած են, մեծապէս կը նպաստեն դաստիարակութեան, սիրտը կը կրթեն, զգացումն կ'ազնուացընեն, հայրենասիրութիւնը կը փռեն, ճաշակը կը քաղցրացնեն, և այլն և այլն : Երաժշտութեան ուսուցիչներն յատկապէս դաստիարակելու նպատակաւ

և ջանքով կ'ուսուցանեն և ո՛չ թէ լոկ պօռալու և պօռացնելու համար, ինչ պէս է մեր դպրոցներուն մէջ : Նախ կը բացատրեն , կը հասկացնեն երգի իմաստն ու ոգին և ապա եղանակն կ'ուսուցանեն :

Տիրգրական կամ մարմնաւոր դժբութիւնն զարգացնելու համար անհրաժէշտ կարեւոր է մարմնամարզութիւնն , հրացանի կրթութիւնն և ընդացումն, որոնք ուսման յատուկ ճիւղ կը կազմեն և կանոնաւորապէս կ'ուսուցուին : Բայց պէտք է ասել, որ մարմնամարզիկ ուսումն այն երկիրներու կամ այն դպրոցներու մէջ աւելի կարեւորութիւն ունի, ուր աշակերտք շատ զբաղմունք ունին, մասաւորական շատ աշխատանք ունին, ուր դպրոցն իսկապէս դպրոց է և ո՛չ խաղարան : Մեր ազգային դպրոցներն, իրենց ներկայ դրութեամբ, սակաւաթիւ բացառութիւններէն զատ , այնչափ կարօտութիւն չունին մարմնամարզութե, վասն զի մեր դպրոցներու աշակերտներն գրեթէ ինքնուս մարզիկներ են, որոնք դպրոց կը գան աւելի խաղալու, իրար մարզելու, ծեծելու և ծեծուելու համար քան թէ մտաւորապէս աշխատելու և ուսանելու :

Երբ մեր դպրոցներու ներկայ դիրքն փոխուի, այն ժամանակ անձրաժէշտ կարեւոր է մարմնամարզութիւնն ևս ուսման սերտ յարակից ճիւղ նկատել, վասն զի մարմնամարզութիւնն , նոյն իսկ 'ի հիւսման, այնչափ մեծ նշանակութիւն ունէր, որ հին Յունաստանի մէջ, ոչ միայն քաղաքացիք, այլ յաւէտ փիլիսոփայք և բանաստեղծք օրուան մի մասն մարմնամարզիկ կրթութեանց կը զոհէին և հրացան գործածել ու լողալ չի մացողն անարի մարդկանց կարգն դասուած էր :

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ի

Ա. Պ . Բ . Ա . — Ձեր զրկած յօդուածն ստացած չէ Խմբագրութիւնս : Եթէ օրինակն ունիք , կարող էք վերստին զրկել և կը խոստանամք դոհուութեամբ հրատարակել : Ի բոլոր սրտէ կը փափաքիմք մանրամասն տեղեկութիւններ ունենալ այն մեծախորհուրդ բարերարութեան մասին, որով Ռուսաստանի Ազգասէր մի կամեցած է Տաճկաստանի մէջ Վարժարան կառուցանել և հաստատուն եկամուտներով նոյն Վարժարանի ապագայն ապահովել : Մեծ ուրախութիւն է սոյնպիսի մի ազգային հաստատութեան գոյութիւն Տաճկաստանի մէջ, և անշուշտ ամեն պարագաներ կանխաւ խորհուած, տնօրինուած և պատրաստուած են :

Ահա նշանաւոր գործ , որուն վերայ Ազգային Վարչութիւնն կարող է դարձնել իւր խորին ուշադրութիւնն և պսակել այն Բարերարի կամքն, որ լիովին հասկըցած է՝ թէ լոյս տարածել, լուսոյ ծաւալման համար զոհութիւններ անել՝ ամենէն մեծ Բարերարութիւնն է այժմ և առ յապոյն :

Ձեր յօդուածն մեզ հասած չէ, որ հիմնաւոր տեղեկութիւն ունենամք այս մասին և Ազգային պարբերականաց հրատարակութիւններն ևս մանրամասն ծանօթութիւններ չեն պարունակեր : Երբ յաջողիմք ձեր յօդուածն ստանալ և կամ որ և իցէ եղանակաւ ամեն հանգամանաց հասուիկիլ, այն ժամանակ անշուշտ մեր խմբագրական խորհրդածութիւնն ևս չէմք զանար, զոր դուք ժամանակէն առաջ այժմ կը պահանջէք մեղմէն :

Եթէ լոկ նպատակին վերայ խորհրդածեմք, տարակոյս չըկայ, որ շատ և շատ դեղեցիկ է : Բայց թէ ի՞նչ

պայմաններ կան, որ աստիճանի միջամտութիւն պիտի ունենայ Ազգային Վարչութիւնն. 'դպրոցի նիւթական շինութեան ձեռնամուխ լինելէն զինքինչ խորհրդներ պիտի յղանայ և ինչ հիմունքներու վերայ պիտի հաստատէ բարոյական շէնքն:

Հա՛ գլխաւոր պայմաններ, որոց դիտութիւնն տակտիկն անձանօթ է մեզ:

Խմբագրութիւնս կը խնդրէ յատկապէս, որ Չեր ունեցած տեղեկութիւններն հաղորդէք փութով, ստոյգ աղբիւրներէ քաղելով:

Վիտէք 'Իուք, որ շատ անգամ անստոյգ հրատարակութեամբ նպատակներն կերպարափոխ կը լինին:

Լ'նշուշտ կը յիշէք, որ քանի մի տարի առաջ Ս. Գալաթեան Սարգիս եպիսկոպոսն ևս, 'ի Պօլիս, Պերայի մէջ, իբրեւ թէ մի Հայու ծախիւք, վարժարան կ'ուղէր կ'առուցանել, որոյ նպատակն, թէեւ գովեստիւ հռչակուեցաւ, բայց անխառն չէր քաղաքական դիտումներէ:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

ՅՈՒՆԱՅ Երրնախր Պատրիարքն քաղաքս ժամանեց, որուն դիմաւորեցին բոլոր Վանուց և Հիւպատոսարանաց թարգմաններն պահակներով (եասախձիններով) հանդերձ: Ժողովրդեան խուռն բազմութիւն քաղաքէն արտաքոյ ճանապարհին վերայ կըստասէր նորեկ Պատրիարքի հանդիսաւոր մուտքն տեսնելու համար: Հանդիսատեսս բազմութեան մէջ չքկային տմենեկին Յունագաւան տեղացի ժողովուրդք, վասն զի նորա առ-

կաւին այն համադումն ունին, որ Պատրիարքն առանց իրենց մասնակցութեան ընտրուած է, ուստի և իրենց համար չէ: Յայն Սիւրբանութեան անդամներէն շատերն եւս, մանաւանդ այնպիսիք, որոնք պատրիարքանալու ձգտումներ և կամ այլ ընտրելիներ ունէին, բնաւ գոհ չեն ներկայ Պատրիարքի ընտրութենէն և այնպէս կը գուշակեն, որ սակաւ ժամանակէն զինքի դարձեալ յուղումներ պիտի ծագին:

Բաղարիս Վսեմ. Բդէշխն, արդէն օգտախիտութեան համար կանխաւ 'ի Յոպպէ գտնուելով իւր Վսեմ. եղբօր հետ, Տէրութեան կողմէն ընդունելութեան և Յոպպէէն յԱրուսաղէմ ուղեւորութեան ամեն արժանաւայել պայմաններն անօրինած էր:

Լ'մայս 29 ին առաջիկայ կիւրակի օրն, 'ի Յունական տօնի առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, Երրնախր Պատրիարքին եպիսկոպոսութեան աստիճան պիտի արուի և յետ այնորիկ Վայսերական Հրովարտակն պիտի կարդացուի:

Պատրիարքական գահն բարձրանալու համար ամենայն ինչ կոտորուած է մինչեւ ցարդ, այսուհետեւ Երրնախր Պատրիարքի խոհեմութեան կը մնայ ժողովրդեան և միաբանութեան տգոհ մասին համակրութիւնն դրաւել և իւր փափուկ պաշտօնն խաղաղութեամբ շարունակել:

Բէթիւհէմի Ս. Օննդեան այրին մէջ, Լատինաց պատարագի ժամանակ, մեր պատկերներէն մին ընկնելով չըջանակներն խորտակուէր էին: Լատինաց լուստարօրն յատկապէս ներդրութիւն խնդրած էր մեր Տեսչէն, որ պատկերն ինքնին ընկած է և ոչ թէ Լատինք ձգած են: Սեր Տեսուչն աճապարելով նոր պատկեր մի

կը կախէ մինչեւ որ հին պատկերի ջրջանակները նորոգել տայ։ Բայց Յոյնք կը յօրձակին և մեր պատկերն կուղեն իջեցնել, Վատինաց Վանուց միաբանութիւնն եւս գրգռելով իրենց լուսարարին դէմ, որ իբր թէ թոյլ կը վարուի և զխողովութիւններ կրնէ Հայոց։ Մինչդեռ ազադակն կը բարձրանայ մեր Տեսչի և Յունաց միաբանից մէջ, Միւտիւրն կը հասնի և իրազէի լինելով ամեն պարագաներուն կը յանդիմանէ Յունաց միաբաններն, որք անամթթաբար ամեն բանի միջամուխ կը լինին և կուռելու առիթներ կըստեղծեն։ Յետ այնորիկ մեր վանքն կ'երթայ Միւտիւրն և երբ պատկերի ջրջանակաց նորոգութիւնն կ'աւարտի, դարձեալ մեր Տեսչին հետ այրն կ'իջնէ և իւր ներկայութեամբ պատկերն կը կախուի։

— Հասկնէներն, որոց առաջ հաց և կերակուր կը տրուէր մեր Վանքէն, իբրեւ մարդասիրութեան շնորհք, և գերեզմանական ապստամբութեան յիմար և անտեղի ցոյցերուն համար կըտրուեցաւ նոյն հացն, այժմ աղերսագիր տալով Վանուցս Կառավարութեան կը թախանձեն, որ վերստին հաց եւ կերակուր տրուի իրենց, սակայն տակաւին որոշում չ'եղաւ։ Վասն զի թէ աղերսագիրն զուրկ է կարեւոր պայմաններէ և թէ կան տակաւին քանի մի Հասկնէներ, որոնք անհոմաւիտ են աղերսագրութեան։

— Նեկտարիոս անունով Յոյն եպիսկոպոս մի, որ երկար ժամանակ ջրջագայած էր Ռուսաստանի մէջ և անբաւ հարստութիւն գիղած և քանի մի տարիէն առաջ գրեթէ տքտրա-

կանի պէս Ռուսիոյ Տերութեան ձեռքով Աշրուսաղէմ վերադարձած էր, վախճանեցաւ ներկայ ամսոյս մէջ։ Յունաց միաբանական վարչութիւնն հանգուցելոյն թղթոյ մէջ դտաւ, որ հանգուցեալն 50 000 լիւայէն աւելի հարստութեան տէր եղած է, սակայն իւր արկղներն բոլորովին թափուր են, ամենեւին գրամ չը կայ և ոչ յիշտաւ կութիւն կայ Պանքայի մէջ գրուելու։

Այժմ հանգուցեալ եպիսկոպոսի սարկաւազն և մանաւանդ աբեղայն կասկածանաց տակ են։ Եպիսկոպոսին մահէն հինգ օր առաջ բժիշկն լուր տուած է, որ հիւանդն անոյս վիճակի մէջ է։ Աբեղայն արգիլեր է որ ամենեւին այցելու ներս չը մտնէ եւ արգիլած է նոյն իսկ խոստովանահայրն, որ երկիցս եկած է վերջին թուակն տալու։ Այժմ համարձակած է հիւանդին սենեակն մտնել, որովհետեւ աբեղայն ամենուր կրկնած է թէ թէ հիւանդն ամենեւին չ'ուզեր այցելու ընդունիլ և ոչ խոստովանահայր։ Այս արգելման համար կասկածըն խիստ կը ծանրանայ աբեղայնի վերայ, սարկաւազն կ'ասէ թէ ինքն իրաւունք ունեցած չէ հիւանդին սենեակն մտնել, իսկ աբեղայն բոլորովին չըմեղ կը ձեւանայ, յայտնելով որ ինքն իւր եպիսկոպոսի ոչ հարստութեանն տեղեակ է և ոչ աղքատութեան։

Ահա գաղտնիք, որ գրուած է Յոյն միաբանից ուշադրութիւնն։ Նորընտիր Պատրիարքի գալստեանն կըստուտէր այս ահագին գումարի խուղարկութեան համար, տեսնենք թէ նորեկ Պատրիարքն ի՞նչ միջոցներ պիտի ձեռք տունու։

Հեղերէն խաղաղիր. Տպեալ 1869.
 Հեղերէն եւ Մարիամ. Տպեալ 1870.
 Հրահանգ սիրոյ, գործ Մարգարեան Յովսէփ վարժապետի. Տպ. 1870.
 Ղերբունա եղեռացի, եւ Եայի կաթողիկոս Աղուանից. Տպեալ 1868.
 Ճաշոց դիրք. Տպեալ 1873.
 Ճաշ հաղորդութեան. Տպեալ 1860.
 Ճաշ դպրոցական. երկու փոքր տետրակներ. Տպեալ 1863 եւ միւսը՝ 1867.
 Ճարտասանութիւն առ ձեռն. տխրատախրեաց եղիազար Մուրատեան. Տպեալ 1866.
 Մատենադրութիւն նախնայ. Տպեալ 1856.
 Մատենադրութիւն Ուսանողի, գործ նախնայ Ս. Տպեալ 1869.
 Մեկնութիւն Եղեռացի. Տպեալ 1850.
 Մեկնութիւն յայտնութեան. Ներսիս Լամբրոսեան. Տպեալ 1855.
 Մեկնութիւն Ասորոյ ժամանակագրութիւն, գործ Ս. Տպեալ 1871.
 —Նոյնը՝ ուրիշ գրադարով բաղդատուած փոքր ինչ տարբերութեամբ.
 Յովհաննէս կաթողիկոս, պատմութիւն Հայոց, գործ նախնայ Ս. Տպեալ.
 Յովսէփ զեղեցիկ. Տպեալ 1849.
 Նորեկ, աղօթամատոյց Ս. Հօրն մերոյ գրիգորի Նորեկացոյ. Տպ. 1868.
 Նոր բնութեցարան. Տպեալ 1868.
 Ողբերգութիւն Ի մեծն Ներսիս. Տպեալ 1863.
 Ուստի հայրնապիւր. Բ. Տպ. 1874.
 Ուստի բարուց. Տպեալ 1857.
 Ուստի տրամադրութեան, Տպեալ 1869.
 Պատմութիւն Ս. Գրոց. Տպեալ 1867.
 Պատմութիւն նոր կրթականի, Տպեալ 1872.
 Պատմութիւն Ս. Երուսաղեմի. բաղդատուած թարգմանութեամբ. Տպ. 1872.
 Պատմութիւն Երուսաղեմի. տխրատախրեաց խորն վարժապետ. (**) Տպ. 1872.
 Պատմութիւն Ս. Լուսաւորի. Տպեալ 1867.
 Պատմութիւն Լէնկլիւնայ. Տպեալ 1873.
 Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.
 Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.
 Պատմութիւն Հայաստանայց, առաքելական Ս. Նիկողոսոյ. Տպեալ 1872.
 Պատմութիւն երկամայ պահպանութիւն Ի Հասկէստան, Տպեալ 1871.
 —Նոյնը՝ Գաղղիարէն լեզուաւ.
 Սաղմոս խաղաղիր, այլ եւ այլ անգամ տպուած.
 —Նոյնը՝ մեծ դիրքով.
 —Նոյնը միջակ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.
 Նոյնը փոքր դիրքով եւ մանր գրով.
 Սիւն օրագիր, կազմեալ 1866 էն մինչեւ 1873. տխրատախրեաց լեզուաւ.
 Ստորագրութիւն Երուսաղեմի. Տպեալ 1859. (**) Տպ. 1872.
 Ստորագրութիւն փոխառաց մանկանց. Տպեալ 1868.
 Տանկիլ տեղադրութիւն Երուսաղեմի. Տպեալ 1855. (*) Տպ. 1872.
 Տարեւր խնամատարութեան, Տպեալ 1852. (*) Տպ. 1872.
 Տեղեւութիւն հովուական. Տպեալ 1856. (*) Տպ. 1872.
 Տրամադրանքութիւն, Պատմութիւն Գրիգորի Փէտրոսեան. Տպեալ 1855. (*) Տպ. 1872.
 Տօնացոյց. Տպեալ 1868.
 Պերական, հին սեպ, Տպեալ 1872.
 Պերական Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1871.
 Պերականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.
 Պերականութիւն Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1869.
 Պրիտոնեական համառօտ, Հայերէն եւ Սրբերէն լեզուաւ. Տպ. 1870.
 Օրացոյց եւ գուշակութիւնք օրոց.
 1

Դ.Բ.	Գ.Բ.
	30
2	20
2	
3	
300	
4	
	30
3	
6	
14	
25	
10	
16	
12	
10	
10	
12	
5	
4	
4	
18	
3	
8	
7	
5	
8	
4	
10	
6	
7	
16	
20	
20	
10	
6	
6	
3	
40	
4	
6	
3	
6	
8	
18	
10	
	20
2	20
4	
3	
2	
1	

ՅԱՆԿ

Յ Ո Ւ Ն Ի Ս

Խորհուրդ և միութեան գործ ճանաչելու համար խորհուրդ պէտք է, շինելու համար միութիւն և գործ	121_136
Արտաւեր Նկեղեցի Հայոց 'ի գիւղն Էլիքէհ	136_137
Կեդրոնական վարժարան Ռուբինեան ընկերութեան առաջին Հայոց	137_139
Ղարոցական շէնքեր	139_140
Նիւթք ուսման նախնական դպրոցներու համար	140_142
Պատասխանի	142_143
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	143_144

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիծը ամեն ամիս կը հրատարակուի 2½ երեսն բաղկացեալ մ'կուկէս ութածաղ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիալի, հանգերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարել :
- Գ. Չատ տետրակ առնել ուղղը, պէտք է ամեն մէկ տետրին շորո դա հեկան վճարել :